4729

1926
3836b

1926 414 3836b

ԱՌԱՋԻՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԿԱԶՄԵՑ Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑ.

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1882

ԱՌԱՋԻՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԿԱԶՄԵՑ Ա. ԲԱՇԱԹՐԵԱՆՑ.

4779

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1882

Дозвол. цензур. Тифлисъ, 10 Іюня. 1882-г

Типогр. М. Вартанянца и К°, Троиц. пер., д. № 11.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.

1. Այս «Առաջին Ընթերցարանը» տրուում է աշակերտների ձեռը «այբբենարանի» նիւթը մշակելուց յետոյ։

2. Ընթերցանութեան մեքենական յաջողակութիւնը վարժւում է այն նիւթի վերայ, որ աշակերտներին ոչ թէ միայն ծանօթ է, այլ և սիրելի է դարձած։ Ուսուցիչը այստեղ հարկաւորութիւն չունի ժամանակ կորցնելու ընթերցածի բովանդակութիւնը բացադրելու համար։

3. Բարոյագիտութեան ու Հայրենագիտութեան նիւթին մենք մեծ կրթող նշանակութիւն տալիս, ինչպէս այդ կարելի է տեսնել մեր «Ուղեցոյց Հայ ուսուցիչի» աշխատութիւնից։ Ուստի և ցանկալի էր, որ առաջին տարուայ մեծագոյն մասնը գործադրուէր դոցա վերայ, և «առաջին ընթերցարանը» տրուէր աշակերտների ձեռը միայն այն ժամանակ, երբ արդէն մշակուած է թէ բարոյագիտութեան ու Հայրենագիտութեան նիւթը և թէ այբբենարանը։ Այդ պատճառաւ և մենք կարծում ենք, որ նպատակայարմար կը լինէր դասերի թիւը տարուայ վերայ բաժանել մօտաւորապէս այսպէս։ Շաբաթական դասերի թիւն է 24։ Դպրոցական տարուայ սկզբից մինչև Փետրուարի 15-ը բարոյագիտութիւնից ու Հայրենագիտութիւնից նշանակւում է 18 ժամ, թուաբանութիւնից 3 ժամ (6 կէս ժամ), կարդալ

և գրելու նախավարժութիւններից (գծագրութիւն, վերլուծութիւն, իսկ յետոյ այբբենարան) 3 ժամ (6 կէս ժամ)։ Փետրուարի 15-ից մինչև դպրոցական տարուայ վերջը երեխաները գլխաւորապէս զբաղւում են կարդալով «առաջին ընթերցարանի» նիւթը։ Այդ ժամանակամիջոցում ընթերցանութեան վարժութեանց հետ զուգնթաց յառաջ են գնում և և ուղղագրութեան վարժութիւնները։

4. Թուաբանութիւնից մենք բաւական ենք համարում առաջին տարուայ համար 1—10։ Հակառակ դիպուածում, ուր հարկը պահանջում է դուրս դալ այդ սահմանից, այնտեղ «առաջին ընթերցարանի» II մասնը հարկաւոր է թողնել երկրորդ տարուան, որով և ձեռն կը բերուի բաւականաչափ ժամանակ թուաբանութեան համար։

5. Աւելորդ չենք համարում այստեղ յայտնել մեր խորին շնորհակալութիւնը Գէորգ Դոդոխեանցին, նորա մի քանի ոտանաւորների համար, որոնք և մենք մեծ ուրախութեամբ ընդունեցինք մեր «առաջի» ընթերցարանի մէջ։ Դոքա են № № 10, 34, 30, 40, 42, 43, 55, և 59։ Սոցա արտատպութեան իրաւունքը վերապահուած է։ Մեզ իբրև աղբիւր ծառայել են նաև Պատկանեանի գրուածները, որի անունը երաշխաւոր է նիւթի գեղեցկութեան։

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑ։

Вартаняцъ

I. ՄԱՍ.

1. ԵՐԵԽԱՑ ԵՒ ԾՆՈՂՔ.

Ես երեխայ եմ։
Ես ունիմ հայր և մայր։
Հայրս ու մայրս իմ ծնողներս են։
Իմ ծնողներս ինձ կերակրում են։
Նոքա ինձ տալիս են զգեստներ ու կօշիկներ։
Նոքա ինձ անկողին են տալիս քնելու համար։
Իմ ծնողներս ինձ սիրում են։
Ես էլ եմ սիրում իմ ծնողներիս։

2. ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ.

Ես ունիմ մի եղբայր և մի քոյր։

Իմ եղբօր անունն է Արմենակ։
Իմ քրոջ անունն է Վարսենիկ։
Սոքա միշտ խաղում են ինձ հետ։
Ես շատ սիրում եմ եղբօրս ու քրոջս։

3. ԻՆՉՈՎ Ի՛ՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ.

Արօրով վարում են, տափանով տափում։ Մանգաղով հնձում են, կամնով կամնում։ Կացինով կտրում են, սղոցով սղոցում։ Դուրով փորում են, շաղափով շաղափում։ Ուրագով տաշում են, կռանով կռում։ Ասեղով կարում են, գրիչով գրում։

4. ՈՎ Ի՛ՆՉ Է ԱՆՈՒՄ.

Աքաղաղը կանչում է, ագռաւը կռկռում։ Աղաւնին ճչում է,

էշը զռզռում։ Կովը պառաչում է, կաքաւը կղկղում։ Արջը մրթմրթում է, խոզը բոհբոխում։ Կաչաղակը կրկչում է, ճնճղուկը ճուճուում։ Ձին խրխնջում է, արտուտը ծլլլում։ Շունը հաչում է, կատուն մլաւում։ Ոչխարը բզզում է, գառը մայում։ Մանուկը լաց է լինում, զանգակը զնգզնգում։ Կոշիկը ճռճռում է, քամին մռնչում։

5. ԻՆՉԻՑ Ի՛ՆՉ ԵՆ ՇԻՆՈՒՄ.

Սեղանը շինում են փայտից, կտաւը գործում կանեփից։ Կոշիկը կարում են կաշուից, կացինը կըռում երկաթից։ Հացը թխում են ալիւրից, ապուրը եփում մսից։ Իւղը հանում են կաթից, ճրագը ձուլում ճարպից։

6. ԳՈՅՆԵՐ.

Ձիւնը սպիտակ է։ Ամուխը սև է։ Մոխիրը գորշ է։ Հագանակը թուխ է։ Ոսկին դեղին է։ Բրտը կանաչ է։ Երկինքը կապոյտ է։ Արիւնը կարմիր է։

Կաթը սպիտակ է։ Թանաքը սև է։ Ամպերը գորշ են։ Դեղձանիկը դեղին է։ Խոտը կանաչ է։ Մանուշակը կապոյտ է։ Վարդը կարմիր է։

7. ԱՐԵԳԱԿ.

Արեգակը բոլորակ է։ Նա վայլում է ոսկու պէս։ Արեգակից ծագում են շատ ճառագայթներ։ Առաւօտեան արեգակը ծագում է, երեկոյին մայր մտնում։ Երբ արեգակը ծագում է, լուսանում է, ցերեկ դառնում։ Երբ մայր է մտնում, մթնում է ու գիշեր դառնում։ Արեգակը ծագելիս եւ

մայր մտնելիս երկնքի ամպերը վայլում են կարմիր ու դեղին գոյներով։

8. ԱՐԵՒ.

Արե՛ւ, արե՛ւ, դուրս արի,
Քեզ բերել ենք աչքի լոյս,
Քու քուրիկը լուսինկան
Բերաւ չամիչ մէկ աման,
Ամպը եկաւ, մութ արաւ,
Չամիչն աչքերէս կորաւ,
Բաց երեսդ, արեգակ,
Մէկ բուռ չամիչ քեզ կը տանք...
Օ՜խ, արեւին խաբեցինք,
Ամպի տակից հանեցինք։

9. ԱՌԱՒՕՏ.

Արեգակը ծագել է։ Լուսացել է։ Թռչունները արդէն արթնացել են եւ ծառերի վերայ երգում են։ Ես էլ իմ քունս եմ առել. վեր կենամ, ի՞նչ եմ պառկել։ Սեղանի վերայ արդէն եփ է գալիս ինքնաեռը։ Շուտ անեմ, երեսս լուանամ եւ շորերս հագնեմ։ Թէ չէ դասերիցս կուշանամ։

10, ՀԱՆԵԼՈՒԿ.

Վերեւը ծակ, ներքեւը ծակ,
Մէջ տեղը ջուր ու կրակ։
Այս ի՞նչն է։

---

11. ԳԻՇԵՐ.

Արեգակը մայր է մտել. մթնել է։ Դուրսը ոչինչ ձայն չի լսւում։ Ոչխարներն ու կովերը արօտատեղից արդէն տուն են դարձել։ Թռչունները քնել են։ Երկնքի վերայ երեւում են լուսինն ու աստղերը։ Լուսինը լոյս է տալիս, աստղերը պսպղում են։ Նուտով հարկաւոր է հանուիլ, անկողին պառկիլ ու քնել։

---

12 ՀԱՆԵԼՈՒԿ.

Մի քոյր ունինք և մի եղբայր,
Որ ապրում են երկնքումը.
Առաւօտեան մէկն է ծնւում,
Երեկոյին կրկին մեռնում։
Երեկոյին միւսն է ծնւում,
Առաւօտեան կրկին մեռնում։
Այս ի՞նչն է։

---

13. ԱՍՏՂԵՐ.

Աստղերը նման են մեծ մեծ կայծերի։ Նոցանից մի քանիսը զօրեղ են փայլում, մի քանիսը թոյլ։ Աստղերը կարելի է տեսնել միայն այն ժամանակ, երբ երկինքը ամպոտած չէ։ Շատ գեղեցիկ տեսք ունի աստղերով զարդարուած երկինքը։ Ես շատ սիրում եմ գիշերը նայել նոցա վերայ։ Այդ ժամանակը ես մտաբերում եմ բարերար Աստծուն, որ ստեղծել է աստղերը եւ շարել երկնքի վերայ։ Մենք չենք կարող համրել աստղերը։ Նոքա շատ բազմաթիւ են։ Կան մարդիկ, որոնք ճանաչում են իւրաքանչիւր աստղ։

---

14. ԻՄ ԱՆԿՈՂԻՆՍ.

Արդէն մութ է եւ ես դադրել եմ։ Դընամ պառկեմ անկողնումս։ Անկողնի մէջ տաք է լինում ու փափուկ։ Երբ լուսանայ էլի վեր կը կենամ։ Մենք չպիտի երկար քնենք։ Ով որ հիւանդ է, նա ցերեկն էլ պիտի անկողնի մէջ պառկած մնայ։ Երբ պառկում ենք քնելու, պիտի աղօթենք։ Երբ

առաւօտեան վեր ենք կենում՝ նոյնպէս պի-
տի աղօթենք։

15. ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ.

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի
անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղի-
ցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի։
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։
Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թո-
ղումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր
զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չա-
րէ. զի քո է արքայութիւն եւ զօրութիւն
եւ փառք յաւիտեանս. ամէն։

Փառք եւ երկրպագութիւն 'ի բարձունս
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

16. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

Ցերեկը աղա՝ Կը բռնեմ՝ բուռովս մին՝
Գիշերը ծառայ։ Բաց կը թողնեմ՝ տանովս մին։
Ա՛յս ի՞նչն է։ Ա՛յս ի՞նչն է։

17. ՄԱՐՄՆՈՅ ԱՆԴԱՄՆԵՐԸ.

Ես ունիմ երկու աչք, երկու ականջ, եր-
կու ձեռն, երկու ոտն եւ մի բերան։ Աչքե-
րովս տեսնում եմ։ Ականջներովս լսում եմ։
Ձեռներովս բռնում եմ։ Ոտներովս ման եմ
գալիս։ Բերանովս խօսում եմ։ Ով որ չի
տեսնում՝ նա կոյր է։ Ով որ չի լսում՝ նա
խուլ է։ Ով որ չի կարող լաւ ման գալ՝ նա
կաղ է։ Ով որ չի կարող խօսել՝ նա համր է։

18. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

Մի ծառ կայ. Ճանապարհի աջ ու
Ծառի վերայ մի կալ՝ ձախ կողմում՝
Կալի վերայ հինգ տալ՝ Երկու եղբայր նստած են,
Ամեն տալին մի մի սալ։ Բայց միմեանց չեն
Ա՛յս ի՞նչն է։ տեսնում։
Ա՛յս ի՞նչ է։

Մի կաստայ ունինք կրակին դրած՝
Նրա մէջ մի քիչ դմակ կայ քցած։
Կաթսան հալւում է՝
Դմակը մնում է։
Ա՛յս ի՞նչն է։

Երկու սենեակ՝ մի սիւնանի։
Ա՛յս ի՞նչն է։

19 ԶԳԵՍՏՆԵՐ.

Մենք զգեստներ ենք հագնում, որ չմերսենք։ Ես ունիմ գտակ եւ բաճկոն, շապիկ ու վարդիք, կօշիկ ու գուլպայ։ Կիւրակի օրը մենք մեր նոր զգեստներն ենք հագնում։ Մեր պաճկոնը գրպան ունի։ Գրպանի մէջ պահում ենք մեր թաշկինակը։ Ո՞վ է կարում զգեստները։ Դերձակը։ Ո՞վ է մաշում ու պատառոտում զգեստները։ Երեխայքը։ Ո՞վ է կարկատում զգեստները եւ լքցնում գուլպաները։ Սիրելի մայրիկը։

20. ՄԵԾ ՊԱՐՈՆ ԴԱՐՁՈՂ ՄԱՆՈՒԿԸ.

Մի փոքրիկ, հինգ տարեկան մանուկ միանգամ ինքն իւրան ասաց. «Էհ, էլ չեմ ուզում փոքրիկ մնալ. այժմ ես կարող եմ մեծ պարոն դառնալ։» Ասաց ու հագաւ հօր գտակը, ձեռն առաւ նորա փայտը և մինչև կէսը գտակի մէջ թաղուած դուրս եկաւ փողոց։ Ով որ տեսնում էր այդ փոքրիկ պարոնին, կանգնում էր, վրան նայում և ծիծաղելով ասում. «Էյ դու, պարո՛ն գտակ, ո՞ւր ես տանում այդ մանուկին»։

21. ՈՒՏԵԼԻՔՆԵՐ.

Ես ուտում եմ հաց ու գաթայ, կաթն ու պանիր, ապուռ ու փլաւ, միս ու ձու, լոբի ու մաշ, սիսեռն ու բակլայ եւ շատ ուրիշ բաներ։ Հացը թխում են ալիւրից։ Ալիւրը շինում են ցորենից։ Ցորենը բսնում է արտերումը։ Մլաղացը աղում է ցորենը եւ շինում ալիւր։ Ալիւրից շինում են խմոր, խմորից—հաց։ Բայց ո՞վ է տալիս մեզ կաթն ու միս։ Մի քանի մարդիկ ոչ հաց ունին, ոչ միս. նոքա աղքատ են։

22. ՀԱՑ.

Մենք ամիսը մի անգամ հաց ենք թխում։ Խմորհունցողը երեկոյին գալիս է, տաշտի մէջ ջուր, ալիւր, աղ ու թթու խմոր ածում եւ հունցում, դառնում է խմոր։ Խմորի երեսը նա ծածկում է եւ թողնում, որ հասնէ։ Լուսաբացին գալիս է հաց թուխը եւ թոնիրը վառում։ Ցետոյ խմորը գնդում են ու շարում։ Խմորհունցողը հացետախտակի վերայ գունդերը բաց է անում գրտնակով եւ տալիս հացթուխին։ Սա բացը փռում է պատատի վերայ եւ

կպցնում թոնրի կողին։ Հացը թոնրից նա հանում է հացահանով եւ տալիս մօրս։ Մայրս էլ հացերը փռում է, չորացնում, ժողովում եւ միմեանց վերայ դարսում պահում։

23. ՄԼԱՂԱՑ ԵՒ ՋՐԱՂԱՑ.

Ո՞ր տեղից ենք ստանում ալիւրը։ Մլաղացն է աղում իւր ջրաղացում։ Ջրաղացը ունի մի մեծ անիւ, որ մանն է գալիս ջրով։ Անիւը պտտում է այն ծանր քարը, որ փշրում է ցորենը եւ ալիւր դարձնում։ Այդ ժամանակը նա այնպիսի չիկչիկոց է հանում, որ խօսածը հազիւ է լսւում։ Ալիւրի փոշին թռչկոտում է եւ լցնում ջրաղացը։ Այս պատճառաւ եւ մլաղացը ոտից մինչեւ գլուխ սպիտակ է լինում։

24. ՀԱՆԵԼՈՒԿ.

Երկու սովաց դաղան ունինք,
Որք մռնչում են ձորումը.
Նոքա աշխարհք են ուտում,
Համ էլ ախարհք են պահում։
Այս ի՞նչն է։

25. ՋՈՒՐ.

Ջուրը լինում է ջրհորի, աղբիւրի, լճի ու գետի մէջ։ Ջրհորից ու աղբիւրից մենք խըմելու ջուր ենք ստանում։ Բայց արտերին, բոյսերին եւ ծառերին էլ է ջուր հարկաւոր։ Երկնքի ամպերն են ջրում նրանց իւրեանց անձրեւով։ Մայրս ջուրը գործ է դնում նաեւ մի բան եփելու եւ լուանալու համար։ Ջուրը մանն է բերում նաեւ ջրաղացի անիւը։ Ջրի մէջ ապրում են ձկներ, խեցգետիններ, գորտեր եւ շատ ուրիշ անասուններ։ Սագերն ու բադերը սիրում են ջրումը լողալ։ Երբ նոքա ջրի ափն են դուրս գալիս, իւրեանց թեւերից թափ են տալիս ջուրը։ Աղբիւրից ջուր են խմում կովերը, ոչխարները, ձիանքը եւ դաշտում ու անտառում բնակւող անասունները։ Ձմեռը ջուրը սառչում է, դառնում սառուց։

26. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

Կտրում եմ—երկարում է,
Տաշում եմ—լայնանում է։
Այս ի՞նչն է։

—

Մէկն ունինք,
Որ խօսում է—բերան չունի,

Ման է գալիս—ոտներ չունի,
Մարդասպան է—սուր չունի։
Այս ի՞նչն է։

27. ԱՆՁՐԵԻ.

Անձրե՛ւ, անձրե՛ւ, ցած արի,
Բսցո՛ւր ցորեն ու գարի,
Բսցո՛ւր ծաղիկ, կանանչ խոտ,
Աւլէ՛ փոշի, մաքրէ՛ օդ։
Անձրե՛ւ, անձրե՛ւ, ցած արի.
Գալը դ ամենքիս բարի։

28. ՄԱՆՈՒԿՐ ՍԱՌՈՒՑԻ ՎԵՐԱՑ։

Ձմեռը դեռ նոր էր սկսուել և ջուրը դեռ լաւ չէր սառել։ Այդ ժամանակը մի տղայ կանգնած էր մի լճի մօտ։ Նայեց, նայեց և ասաց իւր մտքումը. «Ե՛կ, գնամ և սառուցի վերայ փոքր ինչ խաղում»։ Ասաց և արաւ։ Հէնց որ սկսեց սահիլ, սառուցը տրաքուեցաւ։ Դրո՛մի. մեր տղան մինչև վիզը խրուեցաւ լճի մէջ։ Նա սկսեց աղաղակել. «Ո՛հ, օգնեցէ՛ք, ես խեղդւում եմ»։ Մի մարդ վրայ հասաւ, բռնեց մազերից և դուրս հանեց լճիցը։ Ոտից մինչև գլուխ ջրի ու ցեխի մէջ թաղուած նա գնաց տուն։ Հայրը բռնեց նորան և մի լաւ դմփեց։ Ինչո՞ւ։

29. ՍԵՆԵԱԿ.

Մեր սենեակը ունի չորս պատ. մէկը աջակողմեան, մէկը ձախակողմեան, մէկը առաջկողմեան, մէկն էլ յետևի։ Մի պատում գտնւում են լուսամուտները, միւսումը դուռը։ Սենեակը ունի նաև մի առաստաղ և մի յատակ։ Առաստաղը սպիտակացրած է, յատակը տախտակած։ Սենեակումը կայ մի վառարան, մի սեղան, մի դարանակ, մի պահարան և շատ աթոռներ։ Պատից կախուած է մի հայելի։ Վառարանը վառում ենք ձմեռը։ Սեղանի վերայ բան ենք անում, ճաշ և ընթրինք ենք ուտում կամ գրում ու կարդում։ Դարանակի մէջ մեր սպիտակեղէնն ենք պահում, իսկ պահարանում մեր զգեստները։ Ինչի՞ համար են աթոռներն ու հայելին։ Սենեակը մեզ պահպանում է անձրևից, քամուց ու ցրտից։

30. ԴՊՐՈՑ.

Դպրոցում բոլորովին ուրիշ կերպ է քան թէ մեր տանը։ Երեխաները կարգաւ նստոտած՝ նայում են ուսուցչի վերայ։ Ուսուցիչը պատմում է երեխաներին լաւ լաւ հէքաթներ։ Նա նրանց հետ խօսում է նաեւ

անասունների, թռչունների, ծաղիկների երկնքի ու բարերար Աստծոյ վերայ։ Ուսուցիչը հարցնում է, երեխաները պատասխանում են։ Նոքա պատմում են, կարդում, գրում, թւում, գծագրում ու երգում։ Նոքա պիտի ուշադրութեամբ լսեն եւ ջանասէր լինին։ Դորանով նոքա կ'ուրախացնեն իւրեանց ծնողաց եւ ուսուցչին։ Աստուած էլ է սիրում բարի եւ ջանասէր երեխաներին։

Թէև փոքրիկ եմ խաղասէր,
Պիտի լինիմ ես ջանասէր։
Չէ՞ որ ինձնից փոքրիկ մեղուն
Ծաղիկներից մեղր է ժողվում։

31. ԲԱՆՋԱՐԱՆՈՑ.

Մեր տան առաջին կայ մի բանջարանոց։ Բանջարանոցը պատած է չափարով։ Այնտեղ կան լաքեր։ Լաքերում ցանած են լախուր, սոխ, բողկ, լոբի, բակլայ, մաշ, վարունկ ու ծաղիկներ։ Բանջարանոցում կան նաեւ խոտ ու ծառեր։

32. ԱՅԳԻ.

Կար չկար մի ծերունի։ Սա հիւանդացաւ և մեռնելուց առաջ կանչեց իւր որդւոցը և ասաց. «Սիրելի՛ որդիք, իմ ունեցածս չունեցածս այս տունն է և այս այգին։ Ուրիշ բան չունիմ, որ ձեզ թողնեմ։ Բայց այդ այգու մէջ գանձ կայ թաղուած. փորեցէ՛ք, անշուշտ կը գտնէք»։

Նորա մահից յետոյ որդիքը սկսեցին այգին փորփրել։ Փորեցին, փորեցին, բան չգտան. բայց հետևեալ տարին այգին մեծ առատութեամբ խաղող տուաւ։ Այդ ժամանակը նոքա միայն հասկացան, թէ ծերունին ինչ գանձի վերայ էր խօսում։ Ուստի այգու վերայ մեծ մեծ տառերով գրեցին. «Ջանասիրութիւնն է ճշմարիտ ոսկու հանքը։»

33. ՄԱՆՈՒՇԱԿ.

Մանուշակը մի սիրուն փոքրիկ ծաղիկ է։ Նա ունի կապոյտ գոյն եւ անուշ հոտ։ Ո՞ր տեղ է բսնում մանուշակը։ Նա բսնում է թուփերի տակ, խոտերի մէջ։ Հայկանուշը բանջարանոցում գտաւ մի փոքրիկ մանուշակ եւ բերաւ իւր մօրը։ Մայրը ուրախացաւ եւ համբուրեց իւր փոքրիկ սիրուն Հայկանուշին։ Արմենակն էլ մի փունջ մանուշակ բերաւ իւր ուսուցչին։ Ուսուցիչը շնորհակալութիւն արաւ եւ ասաց. «Շատ ապրես։»

34. ԳԱՐՆԱՆԱՐԵՐ.

Կապոյտ գլխով, կանաչ ոտով,
Ես ծաղիկ եմ անուշ հոտով։
Թէև տունկս փոքրիկ է ցած,
Արօտներում միշտ թաք կացած,
Բայց իմ փունջս ամենի տան—
Թէ աղքատի, թէ մեծատան,
Իբրև գարնան առաջի զարդ,
Կարէ տեսնել ամեն մի մարդ։
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
Իմ անունս է մանուշակ։

35. ԿԵՌԱՍԵՆԻ.

Կեռասենին ունի գեղեցիկ սպիտակ ծաղիկներ։ Ծաղիկների վերայ թիչռկոտում են մեղուները։ Մեղուները իւրեանց համար մեղր են ժողովում ծաղիկներից։ Ծաղիկները թափուելուց յետոյ գալիս են կեռասները։ Նոքա սկզբումը կանաչ են լինում, յետոյ կարմրում են։ Ես սիրում եմ կեռասը. նա քաղցր համ ունի։ Ճնճղուկներն էլ են սիրում կեռասը։ Նոքա թափւում են ծառի վերայ եւ ուտում։ Նոքա փոքրիկ գողեր են։

36. ՁԱՐ ՎԱՐԴԱՆԸ.

Մի թռչուն բուն էր դրել Վարդանենց պարտիզի ծառերից մէկի վերայ։ Վարդանը ուզեց տեսնել, թէ բունի մէջ ինչ կայ։ Նա ճնկռտելով բարձրացաւ ճիւղից ճիւղ։ Օհ՛օ, նա ծիծաղումէ։ Ձեռը մեկնում է, որ առնէ։ Բայց—ճը՛րթ. ճիւղը կոտրեց. դրո՛մի—նա փռուեց գետնի վերայ։

37. ՄԵՂՈՒ.

Տեսե՞լ ես դու մեղու։ Նա ինչի՞ նման է։ Քանի՞ ոտն ունի, քանի՞ թև։ Գիտե՞ս, որ նա մի խայթ ունի. որտեղից խայթէ, այնտեղ կ'ուռչի։ Բայց մեղուն մեզ տալիս է նաև քաղցր մեղր։ Մեղրը նա հաւաքում է ծաղիկներից և տանում իւր փեթակը։

38. ՀԱՆԵԼՈԿ.

Անջուր ջրաղաց,
Անկրակ բաղարջ։
Այս ի՞նչն է։

39. ՄԵՂՈՒ.

—Մեղո՛ւ, ասա՛ ինձ, դու էր
Միշտ թռչում ես վայր ու վեր։

—Ամեն օր և օր բոլոր
Ես գնում եմ դաշտ ու ձոր.
Աշխատում եմ ես անվերջ,
Մեղր փնտրում ծաղկանց մէջ,
Եւ գտածս ես շիտակ
Տանում եմ իսկոյն փեթակ,
Որ երբ փչէ ցուրտ քամին,
Ծաղիկները թառամին,
Ես ձմեռը պաշարով
Լինիմ իսպառ ապահով։

40. ՃԱՆՃ.

—Ճանճի՛կ, ասա՛ ինձ, դու էլ
Միշտ թռչում ես վայր ու վեր։
—Փոքրիկ ճանճ եմ զուարճասէր,
Միշտ թռչում եմ վայր ու վեր.
Մի հով տան մէջ, մի բակում՝
Սաստիկ արևի տաքում։
Կերուխումից, խաղից ճոկ
Իսկի չունիմ ուրիշ հոգ։
Եւ ներկայով բաւական
Միտք չեմ բերում ապագան։

41. ԹՌՉՈՒՆ.

Թռչունը շինում է բուն։ Բունի մէջ նա ձու է ածում։ Ձուն բոլորակ է լինում։ Մի քանի թռչունների ձուն զանազան գոյներով ներկած է լինում։ Թռչունը իւր ածած ձուանց վերայ թռչում է նստում և ճոճանում։ Ձագերը սկզբումը լինում են մերկ։ Ցետոյ փոքր առ փոքր թեաւորւում են։ Տեսա՞ծ ես դու թռչունի բուն։ Դու ձագերին բունից չպիտի հանես։ Մարին իւր ձագերին այնպէս է սիրում, ինչպէս մայրը իւր փոքրիկ երեխաներին։

42. ՄԱՆՈՒԿ ԵՒ ԹՌՉՈՒՆ.

—«Մանո՛ւկ, խնդրում եմ, աղաչում եմ քեզ,
Հեռո՛ւ կաց, հեռո՛ւ, դու իմ բունիկէս.
Մէջը չի՛ նայես, մանո՛ւկ սիրական,
Նորա մէջ փոքրիկ ձագիկներս կան։
Քեզի որ տեսնեն, կըսկսեն կանչել.
Մի՞թէ դու կ՛ուզես խեղճերին տանջել։»
Բունը ուզում էր տղան տեսնել խիստ,
Բայց իւր տեղումը նա մնաց հանգիստ։
Երեկոյ եղաւ, եկաւ իւր բունը
Ցածկեց ձագերին սիրուն թռչունը։
Գոհ եղաւ տղից և նորան ասաց.
«Դու ինձ խղճացիր, օրհնէ քեզ Աստուած։»

43. ԱՍՏՈՒԱԾ.

Ո՞վ խրատեց մրջիւնին
Գետինը ծակել,
Բոլոր ամառ մեծ ջանքով
Պաշար հաւաքել։

Ո՞ւմից ուսաւ, ինձ ասէք,
Փոքրիկ թռչունը
Ցարդից, ճիւղից և բրդից
Հիւսել իւր բունը։

Ո՞վ խրատեց մեղուին
Հրաշալի բանիւ
Ծաղկից մեղր հաւաքել
Անուշ և աղնիւ։

Աստուած է այդ ուսուցիչ
Բարի, անսահման։
Ջանացէ՛ք միշտ կատարել
Նորա սուրբ հրաման։

44. ՃՆՃՂՈՒԿ.

Ճնճղուկը մի փոքրիկ թռչնիկ է։ Նորա գլուխը փոքրիկ է, կտուցը բարակ ու սուր, մարմինը մի ձուի չափ։ Իւրաքանչիւր ոտի վերայ ունի չորս մատը։ Նա մի ուրախ թռչնիկ է, մի տեղ հանդարտ չի կանգնում։ Միշտ մի ճիւղից միւս ճիւղը, մի ծառից միւս ծառն է թռչկոտում։ Իւր բունը շինում է պատերի ծակերում կամ տանիքի տակ։ Նա ածում է թխագոյն ձու գորշ բիծերով։ Ճնճղուկը ուտում է զանազան բոյսեր և կեռաս։ Բայց նա շատ սիրում է նաև միջատներ, սարդեր, ճանճեր ու թրթուռներ։ Նա անդադար ճռճռում է. ճի՜ռ, ճի՜ռ։

45. ԿԱՏՈՒ.

Կրակարանի մօտ պառկած է կատուն։ Նա այնտեղ տաքանում է։ Նա ունի գեղեցիկ, կակուղ մազեր և մի երկայն ընչացք։ Ագին թաւամազ է ու կախ ընկած։ Ոտների թաթերի վերայ ունի սուր սուր ճիրաններ։ Նա մրռմրռում է ու մլաւում։ Լսե՞ց ես թէ նա ինչպէս է մլաւում։ Մի անգամ ես բռնեցի մեր կատուին, նա ձեռս ճանկեց։ Կատուն բռնում է մկներ և

ուտում։ Բայց նա երբեմն թռչուններ էլ է բռնում և սպանում։ Այդ լաւ չի անում։ Նա շատ գող էլ է։ Միանգամ մեր խորովածացուն գողացաւ ու կերաւ։ Այս էլ է նա վատ անում։ Բայց նա իւրեան շատ մաքուր է պահում։ Նա մաքրասէր է։

46. ՓԻՍԻԿ—ՄԻՍԻԿ

Կատուն եկաւ փիսիկ—փիսիկ,
Հազար նազով ինչպէս հարսիկ,
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց չանչուլներով։
Կատո՛ւ, կատո՛ւ, հէ՞ր ես տրտում,
Թէ՞ մկներն են այսօր արթուն։

47. ՄՈՒԿԸ.

Մուկը փոքրիկ է։ Նորա մորթը ողորկ է ու գեղեցիկ։ Տեսած կա՞ս դու մուկը։ Նորա գոյնը գորշ է։ Նա ունի մի սուր կնճիթ։ Նորա ոտները բարակ են ու կարճ, իսկ ագին երկայն։ Ոտների վերայ կայ հինգ մատը սուր սուր եղունգներով։ Ի՞նչ է ուտում մուկը։ Հաց ու պանիր, միս ու ճարպ, իւղ ու շաքար։ Մուկը շատ գող է։ Նա իւր սուր ատամներով կրծում է յատակի տախտակները, պահարանը և ներս մտնում։ Ինչ որ գտնում է, գողանում է և ուտում։ Գնա՛, կորի՛ր, փոքրիկ գող. գողերին ոչ ոք չի սիրում։ Մի անգամ մի մուկը եկաւ մօրս մօտը և ասաց. «Սիրելի մայրիկ, քո իւղից փոքր ինչ ինձ տուր։» Մայրս ասաց.—Ա՛ռ, փոքրիկ սատանայ։ Մուկը առաւ և իսկոյն փախաւ գնաց։

48. ԿԱՏՈՒՆ ԵՒ ՇՈՒՆԸ.

Մի որսկան շուն միանգամ մի նապաստակ բռնեց և բերաւ տուն։ Կատուն այդ տեսնելով՝ նախատեց շանը նորա անգթութեան համար։ Այդ րոպէին մի փոքրիկ մուկը դուրս եկաւ նոցա առաջը։ Կատուն իսկոյն վրայ վազեց, բռնեց ու կերաւ։ Շունը ասաց. "Այդ ի՞նչ ես անում։ Դու ինձ նախատում ես, որ ես մի նապաստակ եմ բռնել իմ տիրոջ համար, իսկ ինքդ այժմ մուկն ես անուշ անում։„—"Է՜հ, իմ կերածը մի չնչին մուկն է„, պատասխանեց կատուն։

Մեր կատուն իւր աչքի գերանը թողած, ուրիշի աչքի ծեղն է որոնում։

49. ԲԱԿ.

Գիւղացու տան բակումը առաւել շատ բան կայ տեսնելու, քան քաղաքի տների բակումը։ Նա շրջապատած է զանազան շինութիւններով։ Մի կողմում գտնւում է գիւղացու տունը։ Ցե-

տոյ գալիս են ձիանց սխուռը, կովերի ու եզ-
ների գոմը, ոչխարների փարախը։ խոզանոցը,
հաւանոցը և թռնրատունը։ Միւս կողմում կայ
մի շինութիւն, որ ունի մի մեծ դուռը։ Դա
գիւղացու շտեմարանն է։ Այստեղ է նա պահում
իւր ցորենը, գարին ու կորեկը։ Բայց շատ գիւ-
ղերում ցորենը պահում են ոչ թէ շտեմա-
րաններում, այլ հորերի մէջ։

50. ԱՔԱՂԱՂ.

Ահա աղբանոցում կանգնած է մի աքաղաղ։
Տես, ի՞նչ հպարտ հպարտ ման է գալիս։ Կար-
ծես մի մեծ պարոն լինի։ Նա ունի մի կարմիր
կատար և մի երկայն կարմիր մօրուք։ Նորա
փետուրները գեղեցիկ են ու գոյնզգոյն։ Ագին
երկայն է և մանգաղի ձևով ծռած։ Նա իւր
ոտների վերայ ունի մի մի երկայն բիտ։ Իւրա-
քանչիւր ոտը ունի չորս ճիրանաւոր մատը,
երեքը առաջից, մէկը ետևից։ Երբ աքաղաղը մի
հատիկ է գտնում, կանչում է իւր հաւերին և
տալիս նրանց։Երբ նա կշտանում է, կանգնում է
մի բարձր տեղ և կանչում. ծուղրուղո՜։ Աքաղա-
ղը արթնանում է վաղ առաւօտեան և ծագը
ծագելիս իւր լեզուով կանչում է մեծ Նանին.

«Մե՛ծ Նան, մե՛ծ Նան, վեր կացի՛ր,
Տունը—տեղը վե՛ր քաշի՛ր։»

51. ՀԱՆԵԼՈՒԿ.

Բարձրանամ—սարից ձայն տամ,
Մեռած մարդին—կենդանութիւն։
Այս ի՞նչն է։

52. ԱՔԼԱՐ.

Ինչո՞ւ աքլարը կանգնած է բակում,
Պինդ պինդ կանչում է իրա ծուղրուղուն։

***

Էնդուր որ վաղուց արևն է ծագել,
Բայց ծոյլ երեխան քնից չէ զարթել,
Դեռ չէ վեր կացել աղօթքը արել,
Դպրոցի դասը դեռ չէ սովորել։

***

Կանչում է աքլարն իրա ծուղրուղուն,
Տղայոց պարտքը միտերն է ձգում։

53. ՀԱՒ.

Հաւը աքաղաղից փոքրիկ է։ Նա չունի աքա-
ղաղի պէս փայլուն թևեր, ծռած ագի ու բի-
տեր։ Բայց նա ձու է ածում։ Ձու ածելիս նա
կղկղում է և իմաց տալիս տան տիկնոջ։ Հաւը

թէև աքաղաղից փոքր է և նորա նման բիտեր չունի, բայց նորանից օգտակար է։ Հաւը թուխս է նստում ու ճտահանում։ Նա լաւ մայր էլ է։ Իւր ճտերին տանում է ման ածում։ Երբ որդներ և հաւնդեր է գտնում, գրգալով կանչում է իւր ճտերին, մանրում և տալիս նրանց։ Նա իւր թևերի տակ ճտերին պահպանում է նաև անձրևից և գիշատող թռչուններից։

54. ՁՈՒ.

Ձուն բոլորակ է։ Նա ունի մի սպիտակ կեղև։ Կեղևը շատ բարակ է։ Ձուի մէջ կայ սպիտակոց ու դեղնոց։ Դեղնոցը դեղին է լինում, սպիտակոցը սպիտակ։ Ձուից դուրս է գալիս փոքրիկ ճուտը։ Մայրս ձուն եփում է. բայց նորանից չինում է նաև ձուածեղ կամ եղաձու։ Եփած ձո՞ւն ես շատ սիրում, թէ եղաձուն։ Ես առաւել սիրում եմ ձուածեղը։

55

Փոքրիկ կարաս ունիմ սպիտակ,
Միջի ջուրը երկու տեսակ։
Այս ի՞նչն է։

56. ԲԱԴ.

Բադը հաւից մեծ է։ Նա թէև լաւ է լողում, բայց այնքան լաւ չի ման գալիս և համարեա բոլորովին չի կարողանում թռչել։ Նա շատ ծանրաշարժ է։ Լողալու համար նա իւր մատների վերայ ունի լողսթաղանթներ։ Նորա մարմինը ծածկուած է խիտ խիտ փետուրներով։ Այդ պատճառաւ փետուրների միջով ջուրը չի կարողանում անցնել։ Տանը նրան տալիս են հաց, գարի, վարսակ, թեփ, եփած կարտոփիլ և շատ ուրիշ բաներ։ Դրսումը նա ինքն է իւր կերակուրը որոնում։ Այստեղ նա որոնում է և ուտում որդներ խլունջներ ու փոքրիկ ձկներ։ Բադը մեզ տալիս է իւր ձուն, իւր փետուրները և իւր միսը։ Բադի ձուն եփում են, իսկ միսը տապակում կամ խորովում։ Ի՞նչ են շինում նորա փետուրներից։

57. ԲԱԴԻԿ.

—«Բադի՛կ—բադի՛կ,
Կարմի՛ր թաթիկ,
Ո՞ւր ես գնում կամաց կամաց,
Ձագիկներիդ չորս կողմդ առած։»
—Ես գնում եմ ջուր գտնելու,
Ձագիկներիս լուանալու.
Ձագիկներս մաքուր—մաքուր,
Տղոց երեսն ազատ է ու մուր։

58. ԾԻԾԵՌՆԱԿ.

Ծիծեռնակը մեծ ճարտարութեամբ շինում

է իւր բունը։ Պինդ ցեխի կտորները նա իւր լորձունքով պատում է և մէկը միւսից կպցնում։ Բունի ներսի կողմը նա փռում է մաղեր ու փետուրներ և իւր ձտերի համար փափուկ օրօրոց շինում։ Ձտերը իւրեանց բերանը մեծ մեծ բաց են անում, երբ որձակը նոցա համար ճանճեր, մժղուկներ, մոծակներ և միջատներ է բերում։ Դու ծիծեռնակին չպիտի դպչես։ Նա շատ սիրուն թռչուն է և լաւ էլ երգում է։ Երբ աշունը գալիս է, ծիծեռնակները էլ մեզ մօտ չեն մնում։ Ապա ի՞նչ անեն խեղճերը. ցուրտը վրայ է հասնում և ուտելու էլ բան չեն գտնում։ Նոքա ժողովւում են մի տեղ, ջոկեր կազմում և չւում տաք երկիրները։ Բայց գարնան նոքա կրկին վերադառնում են։

59. ԵՐԳ ՊԱՆԴԽՏԻ.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ։
Ա՞խ, թռի՛ր, ծիծեռնակ,
Ծնած տեղս՝ Աշտարակ,
Անդ շինի՛ր քո բունը
Հայրենի կտուրի տակ։
Անդ հեռու ալևոր
Հայր ունիմ սգաւոր,

Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէօր։
Երբ տեսնես դու նրան,
Ինձնից շատ բարև արա,
Ասա, թող նստի լայ
Իւր անբախտ որդու վերայ։
Դու պատմի՛ր, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով,
Կեանքս մաշուել եղել կէս։
Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս։
Հուտով սառ հողի տակ
Կը պառկիմ այստեղ մենակ,
Թողնելով հօրս սրտում
Ցաւալի յիշատակ։
Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, գնա՛ արագ,
Դէպ Հայոց աշխարհը,
Ծնած տեղս—Աշտարակ։

60. ԱՂԱՒՆԻ.

Աղաւնիները շատ սիրուն թռչուններ են։ Երբ նոքա տանիքի վերայ նստած են լինում, կտուցներով իրենք իրենց մաքրում են, զարդարում և ամեն մի փետուր ուղղում։ Այդ պատ-

ճառաւ և նոքա խելօք երեխաների պէս միշտ մաքուր են լինում: Նոքա ապրում են զոյգ զոյգ: Իւրաքանչիւր զոյգ ունի իւր բունը: Մարին ածում է իւր բունում երկու սպիտակ ձու, թուխս նստում և ճտահանում: Ճտերը սկզբում մերկ են լինում և չեն կարողանում տեղից շարժուիլ: Բայց ծնողները նոցա տաքացնում են ու կերակրում, մինչև որ թևաւորուում են, թռչում և իւրեանց համար կերակուր ճարում:

61. ՄԵՂՈՒՆ ԵՒ ԱՂԱՒՆԻՆ.

Միանգամ մի մեղու ընկաւ լեճը: Վերևից այդ տեսաւ մի աղաւնի, որ ծառից մի տերև կտրեց և ձգեց ջրի մէջը: Մեղուն ճանկռտելով վեր ելաւ, նստեց տերևի վերայ, թևերը չորացրաւ և թռաւ գնաց իւր նաւակից:

Փոքր ինչ յետոյ, երբ աղաւնին հանգիստ նըստած էր իւր տեղը, մի որսորդ հրացանը մեկնեց և ուզում էր նրան սպանել: Մեղուն կայծակի պէս վրայ հասաւ և այնպէս խայթեց նորա ձեռը, որ նա վեր թռաւ: Գնդակը չդպաւ աղաւնուն, այլ մօտովը անց կացաւ: Աղաւնին էլ, սրտումը մեծ շնորհակալութիւն յայտնելով մեղուին, թռաւ փախաւ այնտեղից:

62. ՈՉԽԱՐ.

Ոչխարի մարմինը հաստ է և ծածկուած կա-

կուղ ու տաք բրդով: Առհասարակ նա սպիտակ է լինում, բայց կան նաև սև ոչխարներ: Նոցա ոտները բարակ են, ոտների պճեղները ունին երկու կճղակ: Ոչխարները կճղակաւոր կենդանիներ են: Ամառը նոցա լուանում են, յետոյ խուզում: Նոցա ցաւ չի տալիս, երբ նրանց բուրդը խուզում են: Ո՛չ, ընդհակառակն, նոքա շատ ուրախանում են, որ տաք ամառուայ օրերը նոցանից առնում են այն հաստ բրդեայ մուշտակը: Ոչխարը մի լաւ կենդանի է: Նա չի խածնում և չի յարձակուում մարդոյ վերայ, ինչպէս շունը: Խոյը շատ ուժեղ է լինում: Երբ նա մի ուրիշ խոյի պատահում է, նորա հետ կռուում է: Մաքին ծնում է գառը: Գառները գեղեցիկ կենդանիներ են: Փոքրիկ երեխաների պէս նոքա ուրախ ուրախ խայտում են դէս ու դէն: Ես շատ սիրում եմ գառներին:

63. ԳԱՌՆՈՒԿ.

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդդ սպիտակ ու փափուկ,
Դաշտ վազելով ու արօտ,
Մօրդ քաշում ես կարօտ.
Մի՛ լար, գառնո՛ւկ սիրական,
Փոքրիկ տղի դու նման,
Կը գայ մայրդ, հետը շատ
Կը բերէ քեզ անուշ կաթ:

64. ԾԵԾՈՒԱԾ ԳԱՌՆՈՒԿ.

"Ինչո՞ւ կուլաս, դու գառնուկ։"
—Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ։
"Ո՞վ ծեծեց քեզ, իմ գառնուկ,"
—Մէկ ծեր պառաւ վատ կնիկ։
"Ինչո՞ւ ծեծեց քեզ, գառնուկ,"
—Ծառի տակն էի, մայրիկ։
"Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնուկ։"
—Մէկ ճիպոտով, իմ մայրիկ։
«Ո՞րտեղից խլեց, գառնուկ։»
Ատիկներիս, իմ մայրիկ։
"Ի՞նչպէս լացիր, դու, գառնուկ։"
—Մէ՜, մէ՜, մէ՜, մէ՜, իմ մայրիկ։

65. ԿՈՎ.

Կովը ձիի պէս գեղեցիկ չէ։ Նորա մարմինը, վիզը և ոտները հաստ են, ճակատը լայն, աչքերը պղտոր, իսկ բերանը լայն։ Նա իւր ճակատին ունի երկու երկայն եղջիւր, իսկ ոտների ծայրին կճղակաւոր պճեղներ։ Բայց կովը շատ օգտակար կենդանի է։ Նա մեզ տալիս է համեղ կաթը։ Կաթից մենք շինում ենք իւղ ու պանիր։ Նա տալիս է մեզ նաև իւր միսը, ճարպը և կաշին։ Կաշուից կոշիկներ են կարում, ճարպից մոմ ու սապոն շինում։ Կովը ծնում է տա-

ռին մի անգամ։ Նորա ձագին ասում են հորթ կամ մոզի։ Կովը մի եղջիւրաւոր կենդանի է։ Էլ ինչ եղջիւրաւոր կենդանիներ գիտես։ Կովն ու եզը ուտում են արօտ, յարդ և առուոյտ։ Երբ ուտում են կշտանում, պառկում են և որոճում։ Նոքա որոճող կենդանիներ են։ Էլ ինչ որոճող կենդանիներ գիտես։

66. ՀԱՆԵԼՈՒԿ.

Կով է և կով չէ,
Կաթն է տալիս,
Բայց հորթ չունի,
Այն ի՞նչն է։

67. ՁԻ.

Ձին մի գեղեցիկ կենդանի է։ Երբ նա կառք է ձգում, վիզը կամարի պէս կորացնում է։ Նորա գլուխը երկայն է. վիզը ունի երկայն բաշ։ Մարմինը բոլորակ է, գեղեցիկ և կարճ մազերով ծածկուած։ Ոտները բարակ են։ Նորա սմբակներին պայտ են դամում, որ նա կարողանայ ամուր կանգնել։ Ձիի մազերը լինում են սև, դորշ, կարմիր, դեղին կամ աշխէտ և սպիտակ։ Ձին չի՞ կարող ծիծաղել։ Այո՛, նա ծիծաղում

է, խրխնջում է, երբ ծառան գարին ձեռին մտնում է ախոռը, երբ նա դաշտումը ուրախ, ուրախ սրածում է կամ երբ նա իւր տիրոջ տեսնում է։ Բայց երբ է նա իւր ոտներով դոփում գետինը։ Նա դոփում է իւր ոտներով, երբ երկար մի բանի սպասում է։ Ձին ուտում է խոտ, առուոյտ, յարդ, խար, վարսակ և գարի։ Ձին կամ հեծնում են կամ լծում։ Նա կարող է ընդոստ գնալ, 'ի չորս արշաւել և քայլել։

68. ՁԻՆ ԵՒ ԷՇԸ.

Մի ծանր բեռնաւորուած էշի հետ գնում էր մի պարապ ձի։ Էշը հառաչում էր իւր ծանր բեռան տակ։ Նա ասաց ձիին. "Քո մէջքի վերայ դու ոչինչ չունիս։ Աղաչում եմ քեզ, օգնիր՝ ինձ և մի քիչ բեռնիցս վեր առ։" Բայց ձին նախատեց նորան ասելով. "Դու սարսափելի ծոյլ ես։ Ուրիշին ի՞նչ պարտքն է քո բեռնդ տանել։" Էշը կրկին աղաչեց. "Ինձանում էլ ոյժ չի մնացել։ Եթէ Աստուած կը սիրես, օգնի՛ր ինձ. թէ չէ այս րոպէիս կընկնեմ և հոգիս կը տամ։" Բայց ձին էլի չ կատարեց նորա խնդիրը։ Էշը ընկաւ և շունչը փչեց։ Բոլոր բեռնը այժմ ձիին բեռնեցին, դորա վերայ էլ յաւելացրին էշի կաշին։

69. ԴԱՇՏ.

Մենք շատ անգամ ենք գնացել դաշտ զբօս-

նելու։ Այնտեղ մենք տեսել ենք արտեր ու բանջարանոցներ։ Արտերումը բանում են զանազան արմտիք, իսկ բանջարանոցներում կարտոփիլ, բողկ, բակլայ, լոբի, մաշ, սիսեռը և ուրիշ շատ կանաչեղէն։ Բայց այս ամենը ինքն ըստ ինքեան չի բանում, այլ գիւղացիք են ցանում ու տընկում։ Սակայն նոցա ցանածն ու տնկածը չէր աճիլ ու չէր հասնիլ եթէ բարերար Աստուածը չցօղէր նոցա վերայ անձրևի ջուրը և չուղարկէր նոցա համար արեգակի լոյսը։

70. ԱՐՏ.

Դաշտումը գիւղացիք ցանում են չորս տեսակ արմտիք. ցորեն, գարի, վարսակ ու կորեկ։ Քանի որ նոքա կանաչ են, խոտի շատ նման են։ Նոքա էլ սորա պէս ունին մի դատարկ ցօղուն և նեղ ու երկայն տերևներ։ Նոցա ցօղունն էլ ունի կապեր։ Բայց երբ նոքա բաւականին բարձրանում են, նոցա ցօղունի ծայրին բանում են հասկեր, որոնց մէջ գտնւում են արմտիքը կամ սերմերը։ Երբ արտը հասնում է, հնձում են, հնձածը կասում են, աղում և շինում ալիւր։ Արտերից կերակուր են ստանում նաև մեր ընտանի կենդանիները։ Նոքա շատ սիրում են յարդը։ Արտերի մէջ բնակւում են նաև մի

քանի թռչուններ ու կենդանիներ, ինչպէս են օրինակ. արտոյտը, լորը, կաքաւը և նապաստակը:

71. ԾԻՏՆ ՈՒ ԱՐՏԱՏԷՐԸ.

Մի ծիտ մի արտում բուն էր դրել և ճտահանել: Մի օր արտատէրը եկաւ, արտի գլխին կանգնեց և ասաց. «Արդէն հնձելի ժամանակն է, վաղը պիտի կանչ անեմ և գամ հնձեմ:» Երբ ծիտը յետ եկաւ տուն, ճտերը ասացին. "Շուտ արա՛, ե՛կ այստեղից դուրս գանք ու փախչենք. այսօր արտատէրը եկաւ այսպէս ու այսպէս ասաց„: Մայրը պատասխանեց. «Մի՛ վախէք, քանի որ նա ուրիշի յուսովն է, մենք այստեղ երկար կը կենանք:»—Մի քանի օրից յետոյ արտատէրը կրկին եկաւ և ասաց. «Հէ՛ չեղաւ: Արտիս ժամանակը անցնում է, հասկերը չորացել են և ցորենը թափւում է: Վաղը պիտի մարդիկ վարձեմ և գամ հնձեմ:» Երբ մայրը յետ եկաւ տուն, ճտերը պատմեցին, թէ այսօր էլ եկաւ արտատէրը և այսպէս ու այսպէս ասաց: «Մի՛ վախէք, պատասխանեց մայրը, քանի որ նա ուրիշի յուսովն է, մենք այստեղ երկար կը կենանք:»—Մի քանի օրից յետոյ արտատէրը կրկին եկաւ և ասաց. "Հէ՛, էլի չեղաւ: Ճարն այն է, որ վաղը ես, իմ որդիս և իմ կինս մարդը մի մանգաղ վեր առնենք և գանք հնձենք:» Երբ մայրը վերադարձաւ, ճտերը պատմեցին, թէ այսօր էլ եկաւ արտատէրը և այսպէս ու այսպէս ասաց: Մայրը պատասխանեց. «Այժմ, երբ նա իւր բանը իւր ձեռքովն է ուզում բռնել, վախ կայ. վեր

կացէ՛ք փախչենք այստեղից:» Այդ ժամանակն էլ ճտերը արդէն շահացել էին: Վեր են կենում թռչում գնում:

72. ԼՈՐԻ.

Լորին բանում է բանջարանոցում: Նորա հատիկները գտնւում են մի երկայն ու կանաչ պատեանի մէջ: Պատեանը նոցա տնիկն է: Այնտեղ նոցա համար ապահով է և տաք: Դա նրանց պաշտպանում է անձրևից և խանձող արևից: Պատեանը իմ երկու մատիս չափ երկայն է և ունի մի մատը լայնութիւն: Երկու կողմից նա ունի մի մի կարան, առջևից մի սուր պտուկ, ետևից մի կարճ կոթ: Կայ ցեցի լորի և թուփի լորի: Ցեցինը խայտախարիւ է, թուփինը սպիտակ: Լորու հատիկը ունի մի կեղև և մի միջուկ:

73. ԱՆՏԱՌ.

Ի՜նչ գեղեցիկ է անտառը: Ինչքան որ ներս ես գնում, այնքան էլ խոր լռութիւն է տիրում քո շուրջդ, բայց այնքան էլ գեղեցիկ է լինում: Այնտեղ դու կը տեսնես բարձր բարձր ծառեր, օրինակ. կաղնի, հաղի, բարդի, լորի, թեղի, թեղոշի, ճապկի: Ծառերի միջով երևում է կապոյտ երկինքը: Ճիւղերի վերայ ճռուողում են

թռչունները։ Բայց անտառում կան նաև թուփեր։ Ծառերի տակ, խիտ թուփերի մէջ, բնակւում են շատ կենդանիներ. նապաստակ, աղուէս, այծեամն ու եղջերու։ Անտառում բնակւում են նաև գիշատող գազաններ, ինչպէս են գայլը և արջը։

71. ԿԱՂԻՆ.

Կայ երկու տեսակ կաղին. խոզկաղին և արքայակաղին. Խոզկաղինը խոզերն են ուտում, արքայակաղինը մենք։ Արքայակաղինը բոլորակ է և նստած է լինում մի կանաչ ատամնաւոր մատնոցի մէջ։ Նորա փետակը սկզբում սպիտակ է լինում. բայց երբ հասնում է, դառնում է գորշ։ Փետակի մէջ գտնւում է միջուկը։ Ես շատ սիրում եմ միջուկը. նա համեղ է լինում։ Կաղինի մէջ երբեմն լինում է նաև որդը, որ ուտում է միջուկը։ Նա բանում է թուփերի վերայ։ Երեխաները գնում են անտառ, կաղին քաղում և բերում իւրեանց մօրը։

75. ԳԱՅԼ.

Գայլը մի մեծ շան չափ է և նորան պէս էլ ուժեղ։ Նա շատ աչքածակ է. ինչքան ուտէ,

չի կշտանալ։ Երբ նա քաղցած է, յարձակւում է ամեն մի կենդանու վերայ, որին նա կարող է յաղթել։ Գայլը մի գիշատող գազան է։ Ամառը նա միայնակ է գնում որսի, իսկ աշնան և ձմեռը խումբերով։ Գայլը երբեմն ոչխարներ է փախցնում հօտերից և ուտում։ Այդ պատճառաւ հովիւները իւրեանց մօտ պահում են գամիռ շներ։ Գայլը յարձակւում է մինչև անգամ ձիանց, կովերի, եզների ու եղջերուների վերայ։ Բայց սրանք կարողանում են լաւ պաշտպանուիլ իւրեանց սմբակներով ու եղջիւրներով։ Գայլը մարդից վախում է։ Բայց երբ շատ քաղցած է լինում, նա չի վախենում մինչև անգամ որսորդներից։

76. ՍՏԱԽՕՍ ՀՈՎԻՒԸ.

Մի հովիւ սովորութիւն էր արել խաբել իւր ընկերներին. Շատ անգամ նա երկիւղալի ձայնով կանչում էր. «Գայլը եկա՜, գայլը եկա՜։» Բայց երբ միւս հովիւները վազում էին օգնութեան գալիս, նա ծաղրում էր և ծիծաղում նոցա վերայ։

Մի օր էլ մի գայլ իսկապէս յարձակուեցաւ նորա հօտի վերայ։ Նա սկսկեց առաջուայ պէս աղաղակել. "Գայլը եկա՜, գայլը եկա՜,,։ Նորա ընկերները կարծելով թէ նա էլի խաբում է, տեղերից չշարժուեցան։ Գայլը ընկաւ նորա հօտի մէջ և պատառոտեց ոչխարներին։

Ասածէ. «Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց։»

77. ՍԱՅԼ.

Սայլը ունի երկու անիւ, մի սեռն, մի աւարք և երկու կող։ Սեռնի իւրաքանչիւր ծայրին կայ մի անիւ։ Անիւը ունի մի գունդ, շատ սղեր և մի շրջապատ։ Աւարքը ունի երկու թև, երկու կոփ, մի գլխամէր և մի դիմհար։ Աւարքի թևերը սայլի առաջին միանում են և կազմում մի սուր անկիւն։ Գլխամէրից լծում են եզները։ Ի՞նչու համար է դիմհարը։ Իւրաքանչիւր թև ունի երկու ատամն։ Այս ատամների մէջ է հոլովւում անիւների սեռնը։ Կոփերի վերայ կանգնած են սայլի կողերը։ Սայլի կողերը ունին չորս ցից, երկու երկայն ձող կամ թառ և շատ ճաղեր։

78. ՀԱՆԵԼՈՒԿ.

Չորս եղբայր կայ.
Միմեանց ետևից վազում են,
Բայց միմեանց չեն հասնում։
Այս ի՞նչն է։

II. ՄԱՍՆ.

ՀԷՔԱԹՆԵՐ.

ՈՍԿԻ ԱՍՏՂԵՐ.

1. Կարչ, կար մի փոքրիկ աղջիկ. դորա հայրն ու մայրը մեռել էին։

2. Նա շատ աղքատ էր. տուն չունէր որ մէջը բնակուէր, անկողին չունէր որ մէջը քնէր. նորա ունեցած չունեցածը իւր վրայի զգեստներն էին ու մի կտոր հաց, որ բռնած ունէր իւր ձեռին։ Եւ որովհետև նա այժմ բոլորովին միայնակ էր մնացել, գլուխ վեր առաւ գնաց, մտածելով, որ ողորմած Աստուածը ինձ կ'օգնէ։

3. Ճանապարհին նորա առաջը դուրս եկաւ մի ծեր մարդ և ասաց. «Քոյրի՛կ, փոքր ինչ հաց տուր ինձ, ես շատ քաղցած եմ»։ Փոքրիկ աղջիկը իւր բոլոր հացը տուաւ նորան ու գնաց։ Գնաց, գնաց, նորա առաջը դուրս եկաւ մի երեխայ և ասաց. «Քոյրի՛կ, տո՛ւր ինձ քո գտա-

կըդ, իմ գլուխս մրսում է»: Աղջիկը վեր առաւ իւր գտակը և տուաւ Նորան: Եւ երբ մի փոքր ինչ էլ յառաջ գնաց, եկաւ էլի մի երեխայ, որ վերարկու չունէր: Փոքրիկ աղջիկը հանեց իւր վերարկուն տուաւ Նորան ու գնաց: Նորա առաջը դուրս եկաւ մի աղջիկ, որ պարեգօտ չունէր իւր վերայ և ասաց. «Ցո՛ւր ինձ քո պարեգօտդ»: Նա էլ հանեց իւր պարեգօտը և տուաւ Նորան: Ի վերջոյ նա հասաւ մի մեծ անտառ: Այստեղ արդէն սկսել էր մթնանալ, յանկարծ դուրս եկաւ մի ուրիշ աղջիկ էլ և խնդրեց մի շապիկ: Առաքինի աղջիկը մտածեց. Արդէն մութ է, ինձ այստեղ ոչ ոք չի տեսնիլ. ես իմ շապիկս էլ կը տամ:

4. Երբ նա այսպէս կանգնած էր և ոչինչ չունէր իւր հագին, յանկարծ երկնքից վայր թափուեցան աստեղները մի մի ոսկի դարձած: Դոցա հետ նա ստացաւ նաև նոր զգեստներ: Հաւաքեց ոսկիները, հագաւ նոր զգեստները և շատ հարստացաւ:

2. ՁԱՄԶՈՎ ՓԼԱԻ.

1. Եղել է, չի եղել մի փոքրիկ աղջիկ, որ ապրում էր իւր մօր հետ միասին: Նոքա ուտելու ոչինչ չունէին և մեծ քաղցածութիւն էին

քաշում. Աղջիկը գլուխ վեր առաւ գնաց: Գնաց, գնաց, հասաւ մի անտառ: Այստեղ Նորան պատահեց մի պառաւ կին: Նա իմանում էր, որ աղջիկը շատ աղքատ է, մեծ քաղցածութիւն է քաշում: Այդ պատճառաւ Նորան մի պուտուկ ընծայեց և ասաց. «Եթէ դու այս պուտուկին ասես. «Պուտո՛ւկ, եփէ՛,» նա իսկոյն քեզ համար կ'եփէ լաւ քաղցր չամչով փլաւ: Բայց եթէ դու ասես. «Պուտո՛ւկ, դադարի՛ր»», նա կը դադարէ, էլ չի եփիլ:

Աղջիկը վեր առաւ պուտուկը և բերաւ տուն՝ իւր մօրը: Այժմ նոքա էլ քաղցածութիւն չէին քաշում: Երբ ուզում էին, ուտում էին քաղցր չամչով փլաւ:

2. Մի անգամ աղջիկը գնաց հիւր և մայրը մնաց միայնակ:

Որովհետև նա քաղցած էր՝ ասաց. «Պուտո՛ւկ, եփէ՛»: Բայց մոռացել էր, որ յետոյ հարկաւոր էր ասել. «Պուտո՛ւկ, դադարի՛ր»: Այդ պատճառաւ պուտուկը եփում էր ու եփում: Փըլաւը սկսեց պուտուկից դուրս թափուիլ. փոքր առ փոքր լցրաւ խոհանոցը, ամբողջ տունը, փողոցը, 'ի վերջոյ քաղաքի բոլոր տները, մնաց միայն մի տուն: Ոչ մի մարդ չէր կարողանում աղաստուիլ:

3. Ի վերջոյ աղջիկը տուն եկաւ և կանչեց.

»Պուտո՛ւկ, դադարի՛ր»։ Իսկոյն պուտուկը դադարեց։

3. ՋԱՆԱՍԷՐ ՈՒ ԾՈՅԼ ԱՂՋԻԿԸ։

1. Կար, չկար մի կին։ Սա ունէր երկու աղջիկ։ Սոցանից մէկը ջանասէր էր, միւսը ծոյլ։ Բայց կինը այս ծոյլին առաւել էր սիրում, քան ջանասէրին։ Այդ պատճառաւ նա տանը բոլոր գործը անել էր տալիս միւս աղջկան։ Խեղճ աղջիկը ամէն օր նստած դաշտում, մի ջրհորի մօտ, այնքան թել էր մանում, որ մատները արիւնոտում էին։ Մի անգամ նորա իլիկը էլի արիւնոտուեցաւ. նա կռացաւ և ցանկանում էր իլիկը ջրհորումը լուանալ։ Բայց իլիկը ձեռից դուրս սողաց և ընկաւ ջրհորի մէջ։ Աղջիկը սկսեց լաց լինել, վազեց մօր մօտ և ասաց. «Մայրի՛կ, իլիկը ձեռից դուրս սողաց և ընկաւ ջրհորի մէջ»։ Մայրը բարկացաւ և ասաց. «Ինչպէս որ իլիկը ձգել ես ջրհորի մէջ, այնպէս էլ գնա՛ ու հանի՛ր»։

2. Աղջիկը յետ դարձաւ դէպի ջրհորը և չէր իմանում թէ ինչ անէ։ Երկիւղից թռաւ ջրհորի մէջ որ իլիկը որոնէ։ Նա այստեղ ուշաթափուեցաւ, և երբ կրկին ուշքի եկաւ, տեսաւ որ ինքը գտնուում է մի գեղեցիկ մարգա-

գետնի վերայ։ Մարգագետնով գնաց, գնաց, հասաւ մի հացով լիքը թոնրի։ Հացերը սկսեցին կանչել. «Ա՜խ, հանի՛ր մեզ այստեղից, հանի՛ր մեզ այստեղից, թէ չէ մենք կայրուինք»։ Նա վեր առաւ հացահանը և բոլոր հացերը հանեց թոնրից։

3. Յետոյ իւր ճանապարհը շարունակեց։ Գնաց, գնաց, հասաւ մի ծառի, որի ճիւղերից կախ կախ էին ընկած շատ խնձորներ։ Այդ ծառը աղաղակեց. «Ա՜խ, շաղահարի՛ր ինձ. իմ խնձորներս բոլորեքեանք էլ հասած են»։ Նա այնքան շաղահարեց ծառը, մինչև որ բոլոր խնձորներն էլ թափուեցան։ Աղջիկը հաւաքեց բոլորը մի տեղ և գնաց իւր ճանապարհը։

4. Վերջը հասաւ մի փոքրիկ տան։ Պատուհանից դուրս էր նայում մի պառաւ կին։ Եւ որովհետև նա ունէր մեծ մեծ ատամներ, աղջիկը շատ վախեցաւ և ուզում էր փախչել։ Բայց պառաւ կինը կանչեց։ «Ինչի՞ ես վախում, իմ սիրելի երեխայ. մնա՛ իմ մօտ։ Եթէ դու իմ ամէն բանս կատարես, ես քեզ լաւ կը վարձատրեմ։ Միայն դու ամէն օր իմ անկողինս պիտի լաւ թափ տաս, այնպէս որ փետուրները երկինքը թռչկոտեն»։

5. Որովհետև կինը այսպէս լաւ խօսեց, աղջիկը համաձայնեցաւ և մտաւ նորա մօտ ա-

ղախին։ Ինչոր պառաւ կինը ուզում էր, աղ-
ջիկը իսկոյն բոլորն էլ կատարում էր։ Նա այն-
պէս թափ էր տալիս պառաւի անկողինը, որ
փետուրները ձիւնի պէս թռչկոտում էին ամեն
կողմ։ Ուստի և կինը նորան շատ սիրում էր.
ոչ մի վատ բառ չէր ասում և ամեն օր տա-
լիս էր նորան տապակած ու խորոված։

6. Շատ չ՝անցաւ, աղջկայ սիրտը ուզեց դեռ
դառնալ իւր հայրենիքը։ Շատ մտածեց, քիչ
մտածեց, վերջը ասաց պառաւ կնոջ. «Թէև ինձ
համար այստեղ շատ լաւ է, այսուամենայնիւ
ես չեմ կարող այստեղ երկար մնալ. ես կրկին
ուզում եմ գնալ մօրս ու քրոջս մօտ»։ Պա-
ռաւ կինը ասաց. «Շատ ապրես, որ դուք հօրդ
տունը չես մոռանում։ Եւ որովհետև դու ինձ
այդպէս լաւ ծառայեցիր, ես ինքս քեզ կը տա-
նեմ այնտեղ»։ Նա բռնեց նորա ձեռից և տա-
րաւ։ Գնացին, գնացին, հասան մի մեծ դռան։
Դուռը բացուեցաւ և երբ աղջիկը ուզեց անց-
նել, վերևից առատ ոսկի սնձրև եկաւ, և ոս-
կիները աղջկան չորս կողմից կախ կախ եղան։
«Այդ բոլորը ահա ես քեզ եմ պարգևում», ա-
սաց պառաւ կինը, «որովհետև դու շատ ջա-
նասէր էիր. ահա՛ քեզ և քո իլիկդ»։

7. Պառաւ կինը այդ ասաց թէ չէ, դուռը
փակուեցաւ. աղջիկը աչքը փակեց, բացաւ և

ինքն իւրեան գտաւ իւրեանց տան մօտ։ Երբ
ներս մտաւ իւրեանց բակը՝ աքաղաղը կանչեց։

Ծուլրուղո՜,
Մեր ոսկի աղջիկը տուն եկաւ։

Աղջիկը մտաւ տուն իւր մօրը մօտ, և որովհե-
տև նա ոտից մինչև գլուխ ոսկւով ծածկուած
էր, մայրն ու քոյրը նորան ուրախութեամբ ըն-
դունեցին։

8. Աղջիկը պատմեց ինչ որ նորա գլխովը
անցել էր։ Երբ մայրը այդ լսեց, անպատճառ
ուզեց, որ իւր ծոյլ աղջիկն էլ հարստանայ։
Ուստի սա էլ գնաց այն ջրհորի մօտ, նստեց և
թել մանեց։ Որպէս զի իլիկը արիւնոտուի, ծա-
կեց իւր մատը։ Յետոյ ձգեց իլիկը ջրհորի մէջ
և ինքն էլ թող եղաւ, ընկաւ նորա մէջը։

9. Նա նոյնպէս ուշաթափուեցաւ, կրկին ուշ-
քի եկաւ և ինքը իւրեան գտաւ միևնոյն մար-
գագետնի վերայ։ Մարգագետնով գնաց և հա-
սաւ թոնրին։ Հացերը կանչեցին. «Ա՛խ, հանի՛ր
մեզ այստեղից, թէ չէ մենք կ՝այրուինք»։ Բայց
ծոյլ աղջիկը պատասխանեց. «Հա, հենց այդ
էր մնացել, որ դամ ձեզ հանեմ և զգեստներս
աղտոտեմ։ Մնացէք թոնրի մէջ». ասաց ու գնաց։

Շուտով հասաւ նա խնձորի ծառին։ Սա ըս-
կըսեց կանչել։ «Ա՛խ, շաղահարի՛ր ինձ, շաղահա-
րի՛ր ինձ. իմ բոլոր խնձորներս էլ հասած են»։

Բայց աղջիկը պատասխանեց. «Այո՛, շատ լաւ ես ասում. հենց էն է, եկի ու շաղահարեցի. ապա որ մէկը իմ գլխիս ընկնէ՞». ասաց ու գնաց։

Երբ հասաւ այն պառաւի տանը, նա չվախեցաւ, որովհետև արդէն լսել էր նորա մեծ մեծ ատաւիների մասին, և մտաւ նորա մօտը աղախին։

10. Առաջին օրը ինքը իւրեան ստիպեց, ջանասէր եղաւ և միշտ լսում էր պառաւ կնոջ խօսքին, որովհետև նա ցանկանում էր շատ ոսկի ստանալ։ Բայց երկրորդ օրը սկսեց ծուլանալ։ Երրորդ օրը չէր ուզում առաւօտեան վաղ վեր կենալ։ Պառաւ կինը շուտով ձանձրացաւ նորանից և էլ չուզեց իւր մօտը պահել։ Ծոյլ աղջիկը ուրախացաւ, որովհետև կարծում էր, թէ այժմ ոսկի անձրև պիտի գայ իւր վերայ։ Պառաւ կինը նորան էլ տարաւ դռան մօտ։ Բայց դռնովը անցնելիս փոխանակ ոսկու, նորա վերայ թափուեցաւ մի կաթսայ լիքը կուպրը։ «Այս է քո արած ծառայութեանդ վարձը», ասաց պառաւ կինը և դուռը փակեց։ Երբ ծոյլ աղջիկը տուն եկաւ, աքաղաղը կանչեց.

«Ծուղրուղո՜ւ,
Մեր կուպրոտ աղջիկը տուն եկաւ»։

Եւ աղջիկը մնաց կուպրոտ քանի ապրում էր։

4. ՑԱՐԴԻ ՑՕՂՈՒՆ, ԿՐԱԿ ՈՒ ԼՈՒԲԻ։

1. Եղել է, չի եղել մի պառաւ գիւղացի կին։ Նա մի օր ուզեց լոբեսպաս եփել։ Վեր առաւ մի բուռը յարդ, վառեց և նորա վերայ դրաւ ցախ ու փայտ։ Այժմ երբ նա ուզում էր լոբին կաթսայի մէջ ածել, նոցանից մէկը ընկաւ մի յարդի ցօղունի մօտ։ Շուտով խանձողից մի կտոր կրակ էլ փլուեցաւ և ընկաւ դոցա մօտ։

2. Յարդի ցօղունը ասաց. «Սիրելի բարեկամներ, ո՞րտեղից էք դուք գալիս»։ Կրակը պատասխանեց. «Ես մի խանձողից թռայ ու ընկայ այստեղ. եթէ ես այսպէս արած չլինէի, մոխիր կը կարէի»։ Լոբին ասաց. «Ես էլ այն տեղից եմ գալիս. եթէ պառաւ կինը ինձ էլ ձգած լինէր կաթսայի մէջ, այժմ ես եփուած կը լինէի ու սպաս դարձած, ինչպէս և իմ ընկերները»։ «Իսկ ես, ասաց յարդի ցօղունը, կ՚այրուէի ու մոխիր կը կարէի, եթէ ես էլ չընկնէի յատակի վերայ. իմ բոլոր եղբորցս պառաւ կինը ձգեց կրակի մէջը, վաթսունին միանգամից այրեց»։ «Ուրեմն ի՞նչ պիտի անենք մենք այժմ», հարցրաւ կրակը։ «Մենք միմեանց հետ եղբայր կը դառնանք» ասաց լոբին, «միասին կը չոգենք, կը գնանք մի օտար երկիր»։

3. Բոլորեքեանք հաւանեցին և իսկոյն ճա-

նապարհ ընկան։ Գնացին, գնացին ու եկան, հասան մի փոքրիկ առուի։ Եւ որովհետև նորա վերայ կամուրջ չ'կար, չէին իմանում թէ ինչպէս անցնեն այդ առուով։ Ցարդի ցօղունը ասաց. «Սպասեցէ՛ք, ես ձեզ կ'ասեմ թէ ինչպէս անցնենք. ես թէկն կ'ընկնեմ և առուի վրայ կամուրջ կը շինեմ, իսկ դուք ինձանով կանցնէք միւս կողմը»։

4. Այդպէս ահա յարդի ցօղունը պառկեց և ջրի վերայ մի կամուրջ շինեց։ Կրակը եկաւ և նորա վրայով սկսեց շուտ շուտ վազել։ Բայց երբ նա եկաւ, հասաւ մէջ տեղը, սիրտը վախ ընկաւ ու կանգնեց։ Այդ ժամանակը յարդը սկսեց այրուիլ. կոտրուեցաւ, երկու բաժին եղաւ և ընկաւ առուի մէջ։ Կրակը նորա ետևից ինքը դրմիցց և ընկաւ ջրի մէջ, փշփշաց, թշթշաց ու հանգաւ։

5. Լոբին, որ դեռ ևս մնացել էր կանգնած ափի մօտ, այնքան ծիծաղեց դորա վերայ, որ ձաքձքոտեց։ Նա էլ կը մեռնէր, եթէ մի դերձակ հասած չը լինէր։ Երբ նա լոբուն տեսաւ, բերաւ թել ու ասեղ և կարեց նորա ձաքձքոտած կաշին։ Բայց որովհետև դերձակը գործ էր դրել սև թել, ուստի և այդ ժամանակից սկսած բոլոր լոբիները ունին մի սև կար։

5. ԱՔԱՂԱՂԸ ԵՒ ՀԱՒԸ.

1. Եղել է, չի եղել մի աքաղաղ և մի հաւ։ Մի անգամ աքաղաղը ասում է հաւին. «Այժմ կաղինը հասել է, արի գնանք և մի լաւ ուտենք»։ Հաւը համաձայնեցաւ. նոքա երկոքեան միասին գնացին անտառ։ Գեղեցիկ օր էր. մինչև երեկոյ լաւ կերան, խմեցին։ Այժմ կամեցան տուն դառնալ։ Բայց այնքան կերել էին, որ չափազանց ծանրացել էին։ Ի՞նչ պիտի անէին այժմ. մէկը մի մեծ պարոն էր, միւսը մի մեծ տիկին. ի՞նչպէս կարելի էր ոտով տուն դառնալ։ Կաղնու կեղևից աքաղաղը սկսեց մի փոքրիկ կառք շինել։ Երբ շինեց պրծաւ, հաւը միջին նստեց և ասաց աքաղաղին. «Դու լծուիր կառքին և ինձ տուն տար»։ Բայց աքաղաղը գժգոհութիւն յայտնեց և ասաց. «Փոխանակ որ ես քո ձիդ դառնամ, առաւել լաւ է ես միայնակ յետ կը դառնամ տուն։ Ես կառքի առաջին կը նստեմ և կառապան կը դառնամ»։

2. Երբ նոքա այդպէս միմեանց հետ վիճում էին, եկաւ մի բադ ու բարկացած ասաց. «Ո՞վ է ձեզ թոյլ տուել դալ իմ կաղնի լեռնս. սպասեցէ՛ք, ես ձեզ ցոյց կը տամ». ասաց ու յարձակուեցաւ նոցա վերայ և ուզում էր աքաղաղին կտկտել։ Բայց աքաղաղն էլ նորա ասածնե-

րիցը չէր. Թռաւ, նստեց բադի մէջքին և տո՛ւր, հա՛ տուր, կոցեց Նորան սարսափելի կերպով: Բադը սկսեց խնդրել, աղաչել և ուրախութեամբ համաձայնեցաւ լծուել ու ձգել կառքը: Աքաղաղը հաւին նստացրաւ կառքի մէջ, ինքը նըստեց կառապանի տեղը և սկսեց անդադար կանչել. «Վազի՛ր, բադ, վազի՛ր, ինչքան կարող ես»:

3. Երբ Նոքա փոքր ինչ գնացին, պատահեցան մի ասղի ու մի գնդասեղի, որոնք գնում էին ոտով: Նոքա կանչեցին աքաղաղին. «Սպասեցէ՛ք մի քիչ՝ շուտով կը մթնանայ և մենք էլ չենք կարող յառաջ գնալ. խնդրում ենք, եթէ Աստուած կը սիրէք, վեր առէք մեզ ձեզ հետ»: Աքաղաղը ասաց. «Որովհետև դուք այդքան փոքրիկ էք և քիչ տեղ է հարկաւոր ձեզ, կարող էք նստել. միայն պիտի խոստանաք չը դպչել իմ հաւիկիս ոտին»:

4. Երեկոյին Նոքա հասան հիւրանոց, և որովհետև գիշերը չէր կարելի ճանապարհ գնալ, ուստի Նոքա ներս գնացին այնտեղ գիշերը անցկացնելու: Հիւրանոցի տէրը առաջ չէր ուզում Նոցա ներս ընդունել, բայց վերջը, երբ աքաղաղը Նորան ասաց, թէ դու իբրև վարձ կըստանաս հաւի ածած ձուն, նա թոյլ տուաւ Նոցա գիշերելու: Այստեղ Նոքա ընթրիք կերան ու պառկեցին քնելու:

5. Միւս առաւօտեան վաղ՝ երբ բոլորեքեանք դեռ քնած էին, աքաղաղը արթնացրաւ հաւին. սա ձու ածեց, կոտրեց և երկոքեան կերան միասին, իսկ կեղևը ձգեցին կրակարանի մէջ: Յետոյ Նոքա գնացին ասղի մօտ, արթնացրին ու խոթեցին հիւրանոցի տիրոջ աթոռի մէջ, իսկ գնդասեղը—Նորա երեսսրբիչի մէջ և փախան գնացին: Բադը, որ քնած էր բակումը, լսելով Նոցա դուրս գնալու ձայնը, մաաւ աղբիւրի մէջ և լողալով փախաւ գնաց:

6. Դորանից մի երկու ժամ յետոյ արթնացաւ հիւրանոցի տէրը, վեր կացաւ, հագնուեցաւ, լուացուեցաւ և ուզում էր երեսը սրբել. բայց յանկարծ գնդասեղը ճանկեց Նորա մի ականջից մինչև միւս ականջը: Յետոյ նա գնաց խոհանոց և ուզում էր ծխափողը վառել: Բայց երբ նա եկաւ կրակարանի մօտ, ձուի կեղևները տրաքտրաքուեցան և Նորա երեսին դպան: Դորա վերայ բարկացաւ նա և ուզում էր աթոռի վերայ նստել, բայց շուտով ցատկեց նա իւր տեղից և աղաղակեց «Ո՛հ», որովհետև ասեղը Նորան ծակել էր:

7. Նա առաւել չարացաւ այժմ և մտածեց. «Այս այն հիւրերն են արել, որոնք երէկի երեկոյ այնքան ուշ եկան հիւրանոցս.» Նա գնաց Նրանց որոնելու, բայց Նոքա արդէն ծլկհել էին:

«Այսուհետև, ասաց նա, ես այլևս չեմ ընդունել այնպիսի հիւրերին, որոնք ուտում են, խըմում, ոչինչ չեն հատուցանում և շնորհակալութեան տեղ ինձ վնասում էլ են»։

6. ՀԱՒԻ ՄԱՀԸ.

1. Մի ուրիշ անգամ հաւը աքաղաղի հետ էլի գնացին կաղնի լեռները։ Նոքա միմեանց խօսք էին տուել իւրաքանչիւր կաղնի միջուկ եղբայրաբար բաժանել միմեանց մէջ։ Հաւը գտաւ մի մեծ կաղին և ուզեց միայնակ ուտել։ Բայց միջուկը այնքան մեծ էր, որ մնաց նորա կոկորդում։ Հաւը սկսեց կանչել. «Ա՛խ, սիրելի աքաղաղ, խնդրում եմ քեզ, վազի՛ր, փոքր ինչ ջուր բե՛ր, թէ չէ ես կը խեղդուեմ»։

2. Աքաղաղը շուտ շուտ վազելով գնաց ջրհորը։ բայց սա շատ հեռու էր։ Երբ աքաղաղը ջուր բերաւ կաղնի լեռը, հաւն արդէն մեռել էր։ Աքաղաղը իւր հաւի մահի վերայ շատ տխրեց և սկսեց բարձր ձայնով լաց լինել։ Սորա վերայ եկան վեց մուկը և շինեցին մի փոքրիկ սայլ։ Սայլը պատրաստելուց յետոյ մեռած հաւին դրին նորա մէջը և ինքեանք լծուեցին ու տարին հաւին թաղելու։ Աքաղաղը սայլապանն էր։

3. Երբ փոքր ինչ յառաջ գնացին, եկաւ աղուէսը և ասաց. «Ո՞ւր ես գնում, աքաղաղ»։— Ես գնում եմ իմ հաւիկին թաղելու։—Կարո՞ղ եմ ձեզ ուղեկցել»։—«Այո՛, բայց նստի՛ր սայլի քամակին, եթէ առաջին նստելու լինիս, իմ ձիանքս չեն կարող տանել»։—Աղուէսը նստեց սայլի քամակին, յետոյ եկան մէկը միւսի յետևից նաև գայլը, արջը, եղջերուն, առիւծը և անտառի բոլոր կենդանիները։

Նոքա բոլորը միասին գնացին, գնացին, 'ի վերջոյ հասան մի գետի։ «Ի՞նչպէս անցնենք միւս կողմը», հարցրաւ աքաղաղը։ Ափի վերայ ընկած էր մի յարդի ցօղուն, նա ասաց. «Ես թէկն կ' ընկնեմ, իսկ դուք իմ վրայով կանցնէք միւս ափը»։ Երբ մկները բարձրացան ցօղունի վերայ, բոլորեքեան էլ ընկան գետի մէջ և խեղդուեցան։ Աքաղաղը այժմ չէր իմանում թէ ինչ անէ։ Երբ բարը այդ տեսաւ, խղճաց աքաղաղին և ուզեց նորան օգնել. ուստի և պառկեց ջրի վերայ։ Այն ժամանակը աքաղաղը ինքը սկսեց ձգել սայլը։ Բայց հենց որ սայլը բարձրացաւ ու հասաւ քարի դագաթին, պրանուեցաւ և բոլոր կենդանիները ընկան գետի մէջ և խեղդուեցան։ Աքաղաղը մնաց միայնակ իւր մեռած հաւի հետ։ Նա մի գերեզման փորեց, նորան դրաւ մէջը և հողով ծածկեց։ Գերեզմանի վրայ

կանգնած աքաղաղը այնքան լաց եղաւ, որ վերջը ինքն էլ մեռաւ։ Այսպէս բոլորեքեանք էլ մեռան։

7. ԳԱՅԼԸ ԵՒ ԵՕԹԸ ՈՒԼԸ.

1. Եղել է չի եղել մի այծ։ Նա ունէր եօթը փոքրիկ ուլ և շատ սիրում էր իւր ուլիկներին. այնպէս էր սիրում, ինչպէս մայրն է սիրում իւր երեխաներին։ Մի օր նա ուզում էր գնալ անտառ և իւր ուլիկների համար արօտ բերել։ Բայց գնալուց առաջ կանչեց իւր ուլիկներին և ասաց. «Սիրելի որդիքս, ես պիտի գնամ անտառ, զգոյշ կացէք, եթէ գայլը ներս մտնելու լինի, ձեզ բոլորեցունց կ'ուտէ։ Նա շատ խորամանկ է. բայց դուք նորան կը ճանաչէք նորա կոպիտ ձայնից և սև ոտներից»։ Ուլիկները ասացին. «Սիրելի մայրիկ, մենք շատ զգոյշ կը լինինք, սիրտդ հանգիստ պահիր, ուր ուզում ես, գնա»։ Մայրը մկկաց ու գնաց։

2. Շատ անցաւ, քիչ անցաւ, յանկարծ մէկը դուռը թխկթխկացրաւ ու կանչեց. «Դուռը բացէք, իմ սիրելի երեխաներ, ձեր մայրը եկել է և ձեզ համար բան է բերել ուտելու»։ Բայց ուլիկները լսելով նորա կոպիտ ձայնը, իմացան որ նա գայլն է։ «Մենք դուռը չենք բանալ, պա-

տասխանեցին նորանք, դու մեր մայրը չես. նորա ձայնը բարակ է ու քնքոյշ, իսկ քո ձայնդ կոպիտ է ու բիրտ. դու գայլն ես»։

3. Գայլը տեսաւ, որ նորան ճանաչեցին, գընաց մի մանրավաճառի մօտ և մի մեծ կտոր կաւիճ գնեց։ Նա այդ կաւիճը կերաւ և դորանով իւր ձայնը բարակացրաւ։ Յետոյ յետ եկաւ, ծեծեց դուռը ու կանչեց. «Դուռը բացէք իմ սիրելի երեխաներ, ձեր մայրը եկել է և ձեզ համար բան է բերել ուտելու»։ Բայց գայլը իւր սև թաթերը դրել էր պատուհանի վերայ։ Այդ տեսան ուլիկները և աղաղակեցին. «Մենք չենք բանալ, մեր մօր ոտները սև չեն, ինչպէս քոնը. դու գայլն ես»։

4. Գայլը վազեց գնաց հացարարի մօտ և ասաց. «ոտս ծակել եմ, փոքր ինչ խմոր քսիր»։ Երբ հացարարը նորա թաթին խմոր քսեց, վազեց գնաց ջրաղացպանի մօտ և ասաց. «Մի քիչ ալիւր ցանիր իմ թաթիս»։ Ջրաղացպանը ասաց. «Ես այդ չեմ անիլ, դու ուզում ես մէկին խաբել»։ «Եթէ չանես քեզ կուտեմ». պատասխանեց գայլը։ Ջրաղացպանը վախեցաւ և նորա թաթի վերայ ալիւր ցանեց։

5. Այժմ այդ չարագործը երրորդ անգամ գընաց, ծեծեց դուռը և ասաց. «բացէք դուռը, երեխաներ, ձեր մայրը տուն է եկել և անտա-

ուից ձեզ համար բան է բերել։ Ուլիկներն ասացին. «Ցոյց տուր նախ քո թաթերդ, որ մենք իմանանք թէ դու մեր սիրելի մայրիկն ես»։ Գայլը իւր թաթը դրաւ պատուհանի վերայ և երբ նոքա տեսան որ նա սպիտակ է, դուռը բացին։

Բայց ինչպէս սրտաճաք եղան, երբ գայլը ներս մտաւ։ Մի ուլիկ փախաւ թաք կացաւ սեղանի տակ, երկրորդը անկողնում, երրորդը վառարանում, չորրորդը խոհանոցում, հինգերորդը պահարանում, վեցերորդը կոնքի տակ, եօթներորդը պատի ժամացոյցի արկղի մէջ։ Բայց գայլը նրանց բոլորեցունց էլ գտաւ ու կլանեց, միայն ամենից փոքրիկին չգտաւ, որ թաք էր կացել ժամացուցի արկղի մէջ։ Գայլը այդպէս լաւ կշտանալուց յետոյ դուրս գնաց և կանաչ մարգի վերայ, մի ծառի տակ պառկեց ու քնաւ անցաւ։

6. Դորանից մի քիչ յետոյ այծը անտառից տուն դարձաւ։ Ահ, ի՛նչ տեսաւ նա այստեղ։ Տան դուռը կրնկան վերայ բաց էր. սեղանը, աթոռները և նստարանները գլխիվայր գլորուած, վերմակն ու բարձերը անկողնից առած ու ցրիւ տուած։ Նա որոնեց, որոնեց իւր ուլիկներին, բայց չգտաւ։ Սկսեց կանչել մէկը միւսի ետևից նոցա անունները, բայց ոչոք ձայն չը տուաւ։ Վերջապէս երբ հասաւ ամենափոքրիկին, մի ձայն կանչեց. «Սիրելի մայրիկ, ես թաք եմ կացած ժամացոյցի արկղի մէջ»։ Այծը հանեց նորան այն տեղից և այժմ նա պատմեց թէ ինչպէս գայլը եկաւ և միւս բոլոր ուլիկներին կերաւ։ Դորա վերայ խեղճ այծը շատ տխրեց։ Նա իւր ուլիկի հետ դուրս վազեց։ Երբ նոքա հասան մարգը, գայլին գտան մի ծառի տակ պառկած։ Այծը գայլին ամեն կողմից մի լաւ անտրեց, տեսաւ որ գայլի փորումը մի բան է շարժւում։ «Ահ, Աստուած իմ, ասաց նա, իմ երեխաներս դեռ կենդանի են նորա փորում»։

8. Այծը իւր փոքրիկ ուլիկին ուղարկեց տուն մկրատ, ասեղ ու թել բերելու։ Մկրատով նա պատառեց գայլի փորը։ Հենց որ մի ծակ բացաւ, իսկոյն մի ուլիկ գլուխը դուրս հանեց։ Երբ ծակը մեծացրաւ, մէկը միւսի ետևից դուրս պրծան բոլոր վեց ուլիկներն էլ։ Բոլորեքեանք շատ ուրախացան։ Բայց այծը ասաց. «Այժմ, իմ երեխաներ, գնացէ՛ք քարեր հաւաքեցէ՛ք, բերէ՛ք. նոցանով ես պիտի լցնեմ գայլի փորը»։ Ուլիկները վազեցին շուտ շուտ քարեր ժողովեցին, բերին և լցրին նորա փորը։ Յետոյ այծը շուտ շուտ կարեց նորա փորը, որ նա ոչինչ չիմանայ։

9. Գայլը վերջապէս արթնացաւ, վերկացաւ

կանգնեց, և որովհետև ծարաւ էր, ուզեց գնալ ջրհորից ջուր խմել: Հենց նա ոտները փոխեց թէ չէ, քարերը սկսեցին նորա փորի մէջ թրխկ-թրխկալ: Գայլը կանչեց. «Այս ի՞նչ է իմ փորումն չխկչխկում: Մի՞թէ կերած ուլիկներս քարեր են դարձել»: Եւ երբ նա հասաւ ջրհորին, ուզում էր ջուր խմել, քարերի ծանրութիւնից չկարողացաւ ինքն իրան բռնել, ընկաւ ջրհորի մէջը և խեղդուեցաւ: Եօթը ուլիկը թաք կացած նայում էին. երբ այդ տեսան, մօտ վազեցին և «գայլը պրծաւ, գա՜յլը պրծաւ» աղաղակելով, ուրախ ուրախ պարում էին ջրհորի մօտ իւրեանց մօր հետ:

8. ԳԱՅԼԸ ԵՒ ԱՂՈՒԷՍԸ.

1. Եղել է, չի եղել մի գայլ նա իւր մօտ պահում էր մի աղուէս: Ինչ որ գայլն ուզում էր, աղուէսն իսկոյն անում էր: Մի անգամ երբ նոքա գնում էին անտառով, գայլն ասաց: «Կարմիր աղուէս, ինձ համար մի բան պիտի ճարես ուտելու, թէ չէ քեզ կուտեմ»: Աղուէսը պատասխանեց. «Ես մի գիւղացու տուն գիտեմ: նորա բակումը կայ երկու գառը, եթէ ուզում ես, գնանք նոցանից մէկը բերենք»: Գայլը համաձայնուեցաւ և նոքա գնացին այնտեղ: Աղուէսը գնաց մի գառը բերաւ, տուաւ գայլին և ինքը փախաւ գնաց:

2. Գայլը կլանեց խեղճ գառնուկին, բայց չը կշտացաւ. այդ պատճառաւ նա գնաց փարախը, որ միւս գառն էլ դուրս քաշէ և ուտէ: Բայց որովհետև նա այդ շատ անզգուշութեամբ արաւ, գառնուկի մայրն արթնացաւ և սկսեց այնպէս բարձր աղաղակել ու մայել, որ գիւղացիք վազելով եկան այստեղ: Նոքա տեսան գայլին և այնքան ծեծեցին նորան, որ կաղելով փախաւ գնաց աղուէսի մօտ: «Դու ինձ փորձանքի մէջ ձգեցիր, ասաց նա, ես ուզում էի միւս գառնուկին էլ դուրս քաշել, բայց գիւղացիք իմացան և ինձ սաստիկ ծեծեցին»: Աղուէսը պատասխանեց. «Ինչո՞ւ համար դու այդքան աչքածակ ես. ես ի՞նչ անեմ»:

3. Միւս օրը նոքա երկոքեան էլի դուրս եկան որսի: Գայլն ասաց. «Կարմիր աղուէս, մի բան ճարիր ինձ համար ուտելու, թէ չէ քեզ կուտեմ»: Աղուէսը պատասխանեց. «Ես մի գիւղացու տուն գիտեմ: այսօր երեկոյին նորա կինը գաթայ է թխել. գնանք նոցանից առնենք»: Նոքա գնացին այնտեղ: Աղուէսը հոտ քաշելով գտաւ գաթաները, առաւ նոցանից վեց հատ և բերաւ գայլին: «Ահա՛, առ ուլափիր», ասաց աղուէսը և գնաց իւր ճանապարհը:

4. Գայլը մի ակնթարթում այդ բոլորը կլանեց ու ասաց. «Ի՞նչ համեղ են»։ Գնաց և ուզում էր էլի առնել, բայց պնակը վայր ձգեց ու փշրեց։ Ձայնի վերայ մարդիկ եկան և նոքան այնքան ծեծեցին, որ երկու ոտը կոտրեցին։ Գայլը կաղկանձելով փախաւ գնաց աղուէսի մօտ։ «Դու ինձ փորձանքի մէջ ձգեցիր, ասաց նա, գիւղացիք յանկարծ վրայ հասան և ինձ սաստիկ ծեծեցին»։ Աղուէսը կրկին պատասխանեց. «Ի՞նչ անեմ, ինչու համար դու այդքան աչքածակ ես»։

5. Երրորդ օրը գայլը էլի ասաց. «Կարմիր աղուէս, մի բան ճարիր ինձ համար ուտելու, թէ չէ քեզ կուտեմ»։ Աղուէսը պատասխանեց. «Մի մարդ այսօր մի խոզ է մորթել, միսը տակառի մէջ ընկած է մառանում. արի գնանք, ես քեզ ցոյց կը տամ»։ Գայլը ասաց. «Շատ լաւ, եթէ ես դադրեմ և այլևս չկարողանամ գնալ, դու ինձ պիտի օգնես»։ Լաւ, ասաց աղուէսը և նորան տարաւ մառանը։ Այստեղ շատ միս կար։ Գայլը սկսեց լափել, մոռանալով. «Ժամանակ շատ կայ, ինչքան կարող եմ, կուտեմ»։

6. Աղուէսն էլ էր ուտում, բայց միշտ վազում էր դէպի այն ծակը, որով նոքա ներս էին մտել, և փորձ էր փորձում, որ տեսնէ, թէ փորն

այնքան չի տռզել որ կարողանայ անցնել։ «Սիրելի՛ աղուէս, ասաց գայլը, ինչու համար ես դու անդադար դուրս վազում ու ներս գալիս»։ Ես գնում եմ, տեսնեմ թէ մարդ չի՞ գալիս արդեօք», պատասխանեց խորամանկ աղուէսը։ Բայց գիւղացին լսել էր նոցա ձայնը. մի մեծ մահակ առաւ ու գնաց մառանը։ Աղուէսը նորան տեսաւ թէ չէ, իսկոյն դուրս սողաց ու փախաւ։ Գայլը նոյնպէս ուզեց նորա ետևից դուրս թռչել, բայց նորա փորը այնքան հաստացել էր, որ մնաց ծակումը։ Գիւղացին իւր մահակով այնքան ծեծեց գայլին, որ նա սատկեց։ Բայց աղուէսը փախաւ, գնաց անտառ և շատ ուրախացաւ որ ազատուեցաւ այդ աչքածակ գայլից։

9. ԵՐԱԺԻՇՏՆԵՐ.

1. Եղել է, չի եղել մի մարդ. սա ունէր մի էշ, որ երկար տարիներ ծառայել էր նորան, իսկ այժմ բոլորովին ծերացել էր և ոյժից ընկել։ Տէրը տեսնելով որ իւր էշը այլևս մի բանի պէտք չի գալիս, նորան էլ չէր ուզում կերակրել և ուզում էր մորթել և կաշին հանել։ Բայց էշը այդ բանը նկատեց, գլուխ վեր առաւ, փախաւ գնաց։

2. Գնաց, գնաց, ճանապարհին պատահեց մի որսկան շան։ Այս շունը այնպէս հևհևումէր, ինչպէս մի մարդ, որ երկար ժամանակ վազել էր։ «Ինչո՞ւ համար ես հևհևում, շուն եղբայր, հարցրաւ էշը։ «Ա՛խ, պատասխանեց շունը, որովհետև ես այժմ ծեր եմ և այլ ևս չեմ կարող որսի գնալ, իմ տէրս ուզում էր ինձ մոր-թել, որ էլ կերակուր չտայ ինձ. այս պատճառաւ ես էլ գլուխս վեր առի ու փախայ։ Բայց չեմ իմանում թէ ինչպէս պիտի հաց ճարեմ»։—«Գիտես՞ ինչ կայ, ասաց էշը, ես գնում եմ այս ինչ քաղաքը երաժիշտ դառնալու, արի ինձ հետ ընկերացիր, գնանք միասին։ Ես զուռնայ կածեմ, դու էլ թմբուկ կը զառնես»։ Շունը համաձայնուեցաւ և երկոքեան ընկեր դարձան ու գնացին։

3. Շատ գնացին, քիչ գնացին, ճանապարհին պատահեցան մի կատուի։ «Բարև, կատու եղբայր. ինչո՞ւ համար երեսդ այդպէս կծրխրածած է», հարցրաւ էշը։ Ո՞վ է կարող ուրախ լինել իմ տեղս. որովհետև ես այժմ ծերացել եմ, բոլոր առամներս թափուել են և այլևս չեմ կարողանում մուկը որսալ, այլ առաւել կը ցանկանայի վառարանի քամակին պառկած մնալ, այդ պատճառաւ իմ տան տիկինս ուզում էր իմ վզիցս մի քար կապել, ձգել ջրի մէջ և

խեղդել։ Թէև ես այժմ փախել եմ ազատուել այդ մահից, բայց չեմ իմանում, ինչ անեմ, ուր գնամ»։—«Երկու չլինինք, երեք լինինք, ասաց էշը, արի, գնանք այս ինչ քաղաքը երաժիշտ լինելու»։ Կատուն համաձայնուեցաւ և երեքը միասին շարունակեցին իւրեանց ճանապարհը։

4. Շատ գնացին, քիչ գնացին, ճանապարհին պատահեցան մի աքաղաղի, որ կանգնած իւր տան դռան առաջին, կանչում էր ինչքան ոյժ ունէր։ «Ինչո՞ւ համար ես այդ պէս աղաղակում, աքաղա՛ղ եղբայր, հարցրաւ էշը, ի՞նչ է պատահել քեզ»։ «Էլ ի՞նչ պիտի պատահի, ասաց աքաղաղը, վաղը իմ տան տիրոջ տօն օրն է, շատ հիւրեր են կանչուած։ Այս պատճառաւ տան տիկինը հրամայել է խոհարարին, որ ինձ այս երեկոյին մորթէ և վաղուան համար խորոված պատրաստէ»։—«Հոգս մի՛ անիր, ասաց էշը, երեք չլինինք, չորս լինինք. դու լաւ ձայն ունիս. արի՛ մեզ հետ գնանք երաժիշտ դառնանք»։ Աքաղաղը համաձայնուեցաւ և բոլորեքեանք միասին ճանապարհ ընկան գնացին։

5. Շատ գնացին, քիչ գնացին՝ իրիկնապահին եկան հասան մի անտառ և վճռեցին գիշերը այստեղ անցկացնելու։ Էշն ու շունը պառկեցին մի մեծ ծառի տակ, կատուն վեր եաւ, նստեց

մի ձիւղի վերայ, իսկ աքաղաղը բարձրացաւ ու թառ եկաւ ծառի գագաթին։ Այստեղից աչք ածեց իւր չորս կողմը, հեռուումը տեսաւ մի լոյս և կանչեց իւր ընկերներին։ «Մեզնից ոչ շատ հեռի մի տուն պիտի լինի, որովհետև այնտեղ ես մի լոյս եմ տեսնում»։ Էշը ասաց. «Վեր կացէք գնանք այնտեղ, էլի մի բան կը գտնենք ուտելու. այստեղ վատ է»։

6. Բոլորեքեանք վեր կացան, ճանապարհ ընկան գնացին դէպի այն կողմը, որտեղ լոյս էր տեսնւում։ Լոյսը փոքր առ փոքր մեծանում էր ու մեծանում։ Շուտով նոքա եկան հասան մի աւազակների որջի։ Էշը ամենից մեծն էր. նա գնաց պատուհանից նայեց, որ տեսնէ թէ ինչ կայ։ Երբ վերադարձաւ, աքաղաղը հարցրաւ. «Ի՞նչ կայ, ինչ՞ չկայ այնտեղ»։—«Ի՞նչ կայ, պատասխանեց էշը, մի սեղան, վրան դեղեցիկ կերակուրներ ու խմիչքներ շարած, չորս կողմը աւազակները նստոտած, ուտում են ու խմում»։ Այս որ լսեցին, բոլորիցունց բերանի ջուրը վազեց։ Աքաղաղն ասաց. «Ինչ լաւ կը լինէր, որ այդ բոլորը մեր առաջին շարուած լինէր»։ Այո՛, այո, ասաց էշը, փորերնիս փոքր ինչ կը կշտանար»։ Խորհուրդ արին, թէ ինչ անենք, որ աւազակներին այդ տեղից դուրս փախցնենք։ Շատ մտածեցին, քիչ մտածեցին վերջը վճռեցին, որ

էշը իւր առաջին երկու ոտների վերայ կանգնէ, պատուհանի առաջ, շունը վեր ելնէ, նրա տէ նորա մէջքին, կատուն բարձրանայ շան վերայ, իսկ աքաղաղը թռչէ նստէ կատուի գլխին։

7. Ինչպէս վճռեցին, այնպէս էլ կատարեցին։ Յետոյ բոլորեքեանք միասին սկսեցին աղաղակել ինչքան կարող էին։ Էշը զըռռում էր, շունը հաչում էր, կատուն մլաւում էր, իսկ աքաղաղը կանչում էր։ Յետոյ բոլորեքեանք միասին պատուհանով դլորուեցան, ընկան սենեակի մէջ, այնպէս որ պատուհանը ցած ընկաւ ու փշրուեցաւ։ Աւազակները կարծելով թէ եկել են իրանց բռնելու, վախից թողեցին փախան անտառ։ Այժմ չորս ընկերն էլ սեղան նստեցին և այնքան կերան խմեցին, որ կարծես թէ մի ամիս ոչինչ կերած չը լինէին։

8. Փորերնին լաւ կշտացնելուց յետոյ ճրագը հանդցրին և պառկեցին քնելու։ Էշը պառկեց բակումը՝ ագրի վերայ, շունը դռան քամակին, կատուն կրակարանի տաք մոխրի վերայ, իսկ աքաղաղը վեր ելաւ նստեց թառի վերայ և երկար ճանապարհից դադրած լինելով շուտով քնաւ անցան։

9. Կէս գիշերին աւազակապետը հեռուից տեսնելով սր տանը էլ ճրագ չկայ և ոչինչ ձայն չի դուրս գալիս, ասաց մի աւազակի. «Գնա՛,

տե՛ս ինչ կայ ինչ չը կայ մեր տանը»։ Աւազակը եկաւ տեսաւ ձայն ծպուտ չկայ. գնաց խոհանոցը և ուզում էր ճրագ վառել։ Բայց կարծելով թէ կատուի աչքերը խանձող է, մի լուցկի առաւ, դրաւ նորա աչքի վերայ որ ճրագ վառէ։ Բայց կատուն յանկարծ թռաւ նորա երեսին և մի լաւ ճանկռոտեց։ Աւազակը սաստիկ վախեց և ուզում էր փախչել, բայց շունը, որ այնտեղ պառկած էր, յարձակուեցաւ նորա վերայ և խածոտեց ոտը։ Երբ նա ուզում էր բակով փախչել, էշը իւր երկու յետի ոտնով մի սարսափելի աքացի տուաւ նորան, իսկ աքաղաղը, որ այդ ձայնից արթնացել էր, դարպասի վերևից կանչեց «ծուղրուղո՜»։

10. Աւազակը ինչքան ոյժ ունէր, փախաւ գնաց իւր աւազակապետի մօտ և ասաց. «Ա՜խ, մեր տանը մի օշավ կայ նստած. նա իմ երեսս ճանկռոտեց։ Դռան առաջին կանգնած է մի մարդ, իւր ձեռին մի դանակ բռնած. նա իմ ոտս ծակեց։ Բակումը պառկած է մի սև այլանդակ ճիւաղ. նա մի մեծ, հաստ գաւազանով այնպէս խփեց, որ քիչ մնաց թէ տեղս մնայի։ Իսկ վերև, տանիքի վերայ, նստած է մի դատաւոր, որ կանչում էր.« Բռնեցէ՛ք, բերէ՛ք ինձ, այդ աւազակին։ Մեծ դժուարութեամբ փախայ ու ազատուեցի»։ Աւազակները վախեցին յետ դառնալ իւրեանց տունը և թողեցին ու գնացին մի ուրիշ աշխարհ։ Իսկ մեր չորս երաժիշտներին այնպէս հաւանուեցաւ այս տունը, որ էլ չուզեցին այդ տեղից հեռանալ։

10. ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՂՔԱՏ.

1. Կար, չկար մի ժամանակ, երբ Աստուած բնակւում էր երկրիս վերայ, մարդկանց մէջ։ Մի անգամ նա ուզեց բոլոր աշխարհս պտտել և փորձել թէ ո՞վ ինչպէս է ապրում։ Մի օր վաղ առաւօտեան ճանապարհ ընկաւ, գնաց, գնաց և դեռ օթեվանին չը հասած, գիշերը վրայ հասաւ։ Ճանապարհին նորա առաջը դուրս եկան երկու տուն, որոք կանգնած էին մէկը միւսի դիմացը։ Դոցանից մէ՛ը մեծ էր ու գեղեցիկ, միւսը փոքրիկ ու վատ։ Մեծը մի հարուստի էր, փոքրիկը մի աղքատ մարդի։ Աստուած մտածեց. «Հարուստին ես ծանրութիւն չեմ լինիլ, առաւել լաւ է նորա մօտ կ՚իջևանեմ»։ Ասաց և դուռը թխկթխկացրաւ։ Հարուստը, լսելով այդ թխկթխկոցը, բացաւ պատուհանը և հարցրաւ օտարականին. «Ի՞նչ էք ուզում»։ Աստուած պատասխանեց. «Խնդրում եմ ինձ մի տեղ տաք գիշերելու»։ Հարուստը ճանապարհորդին ոտից մինչև գլուխ մի լաւ

տնտղեց, տեսաւ որ Աստուած իւր հագին գեղեցիկ զգեստներ չունի, ուստի նա աղքատ պիտի լինի, և իւր գրպանում շատ փող չպիտի ունենայ։ Այդ պատճառաւ գլուխը շարժեց և ասաց. «Ես չեմ կարող ձեզ ընդունել. բոլոր իմ սենեակներս լիքն են ցորենով։ Եթէ ես ամեն իմ դուռս ծեծողի ներս ընդունելու լինիմ, ինքս էլ ձեռս պիտի առնեմ աղքատի ցուպը։ Մի ուրիշ տեղ որոնեցէք ձեզ համար»։ Ասաց, փակեց պատուհանը և թողեց Աստուծոյ այնտեղ կանգնած։

2. Աստուած էլ իւր երեսը դարձրաւ նորանից. գնաց դէպի միւս աղքատիկ տունը և ծեծեց դուռը։ Հենց խփեց դուռը թէ չէ, աղքատը իսկոյն եկաւ, բացաւ դուռը և ասաց. «Ներս հրամայեցէք, խնդրեմ արդէն մութը կոխել է և դուք այլևս չէք կարող յառաջ գնալ»։ Դա շատ հաճոյ թուեցաւ Աստուծոյ և նա ներս մտաւ։ Աղքատ մարդը նորան ներս տարաւ և ասաց. «Բարև եկաք, հանուեցէք և հանգստացէք։ Դուք պիտի մեզ ներէք. մենք ձեզ լաւ յարգել չենք կարող։ Ինչ անենք, աղքատ ենք, բայց ինչ որ ունիք ամենայն սիրով կը տանք»։ Նա կանչեց իւր կնոջը և ասաց։ «Այ կին, ջուր բեր, մեր հիւրի գլուխը և ոտները լուացի՛ր. հեռու ճանապարհից է գալիս»։ Կինը ջուր դըբաւ, տաքացրաւ և բերաւ իւրեանց հիւրի ոտներն ու գլուխը լուացաւ։ Դորանից յետոյ գնաց ընթրիք պատրաստեց բերաւ։

3. Շատ բան չունէին. եղածը մի քանի ձու էր և իւրեանց այծի կաթից շինած մածունը։ Երբ սեղանը պատրաստուեցաւ, Աստուած նստեց և նոցա հետ միասին կերաւ խմեց մեծ ուրախութեամբ, թէև պատրաստած կերակուրները շատ էլ համեղ չէին։ Ընթրիքը ուտելուց յետոյ, երբ քնելու ժամանակը եկաւ, կինը կանչեց իւր մարդին մի կողմ և գաղտնի ասաց նորան. «Լսի՛ր, իմ սիրելիս, մենք մեր հիւրի համար անկողին չունինք. խեղճը հեռու ճանապարհից է գալիս, դադրած է. մենք մեր անկողինը տանք նորան, իսկ մեզ համար յարդից մի ներքնակ շինենք, մէջը պառկենք»։ «Շատ աւ, պատասխանեց նա, ես նորան այդ կ'առաջարկեմ»։ Աղքատ մարդը գնաց Աստուծոյ մօտ և ասաց. «Խնդրեմ հրամայեցէք և պառկեցէք այս գիշեր մեր անկողնի մէջ, դուք հեռու ճանապարհից էք գալիս, դադրած էք, ձեզ հարկաւոր է, որ մի լաւ քնէք ու հանգստանաք»։ Բայց Աստուած հրաժարուեցաւ, չէր ուզում ծեր մարդուն ու պառաւ կնոջ զրկել իւրեանց հանգստութիւնից, սակայն սոքա նորան բաց չթողին, մինչև որ չհամաձայնուեցաւ նոցա

անկողնում պառկել։ Իսկ նոքա ինքեանք իւրեանց համար յարդից անկողին շինեցին գետնի վերայ, պառկեցին մէջը և քուն եղան։ Միւս առաւօտեան նոքա վաղ, ծագը ծագին վեր կացան և իւրեանց հիւրի համար մի համեղ նախաճաշիկ եփեցին։

4. Նախաճաշիկը ուտելուց յետոյ ողորմած Աստուածը վերկացաւ և ուզում էր շարունակել իւր ճանապարհը։ Բայց երբ հասան դռանը, երեսը դարձրաւ դէպի նոցա և ասաց. «Որովհետև դուք այդքան բարեսիրտ էք ու առաքինի, ինձնից երեք բան խնդրեցէք. ինչոր խնդրէք, ես կը կատարեմ»։ Աղքատ մարդը ասաց. «Ինչ պիտի խնդրեմ. յաւիտենական արքայութիւն, և մեր երկուսիս համար առողջութիւն և օրական հաց. այս երկու խնդիրը որ կատարէք մենք շատ ու շատ գոհ կը մնանք»։ Բարերար Աստուածը ասաց. «Դուք չէ՞ք ցանկանալ ձեր ծերութեան օրերում մի նոր տուն, ունենալ»։ Աղքատ մարդը պատասխանեց։ «Այո՛, եթէ դա էլ ստանայի, ես շատ երջանիկ կը լինէի աշխարհիս երեսին»։ Աստուած կատարեց նոցա խնդիրքը. նա հրամայեց և աղքատ մարդն ու կինը աչքերնին բացին ու տեսան մի գեղեցիկ, նոր տան մէջ նստած։ Ինչքան ուրոնեցին, որ Աստուածանից շնորհակալ լինին, բայց Նորան

էլ չգտան։

5. Արդէն արեգակը բաւականին բարձրացել էր, երբ հարուստը արթնացաւ, եկաւ, բացաւ լուսամուտների փեղկերը և ի՞նչ տեսնէ. իւր առաջին կանգնած է մի գեղեցիկ, նոր տուն, մեծ մեծ լուսամուտներով, ուղիղ այնտեղ, ուր որ առաջ կանգնած էր մի հին խրճիթ։ Նա աչքերը պլզած, երկար ժամանակ նայում էր զարմացած։ Վերջապէս երբ ուշքը գլուխը ժողովեց, կանչեց իւր կնոջը և ասաց։ «Ե՛կ, տե՛ս թէ ի՞նչ է պատահել։ Դեռ երեկի երեկոյի այնտեղ կանգնած էր մեր դրացու հին ու կիսակործան խրճիթը, իսկ այսօր նորա տեղ մի գեղեցիկ ու նոր տուն։ Վազի՛ր, գնա՛ նոցա մօտ և իմացիր թէ այդ ինչպէս է եղել»։ Կինը վազելով գնաց և հարցրաւ աղքատ մարդուն։ Նա պատմեց թէ, երեկի երեկոյի մեզ մօտ եկաւ մի օտարական և դիշերեց մեր տանը։ Այսօր առաւօտեան երբ բարև ճնա՛ էինք անում նա կատարեց մեր խնդիրքը. խոստացաւ մեզ յաւիտենական արքայութիւն, առողջութիւն և օրական հաց. բացի դրանից մեր հին խրճիթի փոխարէն պարգևեց մեզ մի նոր տուն»։ Հարուստի կինը հենց որ այս լսեց, վազեց եկաւ իւր մարդին բոլորը պատմեց։ Մարդը ասաց. «Ինձ ծեծել և սպանելը տեղն է։ Ա՜խ, եթէ ես ի-

մանայի՞։ Օտարականը առաջ եկաւ իմ մօտ և ես նորան չընդունեցի»։ Կինը ասաց. «Շուտ արա՛, նստի՛ր քո ձիդ, գնա՛, հասի՛ր այն մարդի ետևից, և հիւր բեր մեր տունը, որ քո երեք ցանկութիւնդ էլ կատարէ»։

6. Հարուստը շուտ շուտ թամբեց իւր ձին, նստեց և սկսեց մտրակել, որ կարողանայ հասնել բարերար Աստուծոյ ետևից։ Գնաց, գնաց, վերջը հասաւ. ձիից վայր իջաւ, երեք անգամ գլուխ տուաւ և ասաց. «Ներողութիւն եմ խնդրում ձեզնից, հազար ներողութիւն, որ ես երեկի երեկոյին ձեզ ներս չընդունեցի. ես գնացի որոնելու տան բանալին, բայց երբ դարպասը բացի, տեսայ որ դուք արդէն գնացել էք։ Եթէ մի անգամ էլ գալու լինիք, պիտի իմ մօտ իջնէք»։ «Լաւ, ասաց ողորմած Աստուածը, եթէ մի անգամ էլ գալու լինիմ, այդպէս կանեմ»։ Հարուստը ասաց. «Կարո՞ղ եմ ես նոյնպէս երեք բան ցանկանալ, ինչպէս և իմ դրացիս»։ «Այո՛, ասաց բարերար Աստուածը, դու այդ կարող ես, բայց լաւ կանես որ ոչինչ չցանկանաս»։ Բայց հարուստը ասաց. «Եթէ ես իմանայի թէ իմ ցանկութիւններս կը կատարուին. ես մի բան կը ցանկանայի, որ ինձ բախտաւոր շինէր»։ Բարերար Աստուածը ասաց. «Լաւ, գնա՛ տուն, քո երեք ցանկութիւնդ էլ

կը կատարուի»։

7. Հարուստը ուրախ ուրախ ձի նստեց և դարձաւ դէպի տուն, մտածելով թէ ինչ ցանկանայ, որ առաւել հարուստ ու բախտաւոր լինի աղքատից։ Այդպէս մտքումը խորասուզուած գնալիս նա իւր ձեռքից բաց թողեց ձիի երասանակը. ձին սկսեց յետին ոտների վերայ ոստոստալ։ Նա նորա վիզը շփում էր և ասում. «Հանգստացի՛ր, հանգստացիր իմ թռչնիկս», բայց նա միշտ իւր տիրոջ հակառակ էր գործում։ Վերջապէս տէրը ձանձրացաւ և երբ ձին էլի յետին ոտների վերայ ծառացաւ, բարկացած կանչեց. «Դէ՛ որ այդպէս է, դու ինքդ քո գլուխդ ուտես»։ Այդ ասաց թէ չէ, թրա՛խկ, ձին ընկաւ ու սատկեց։ Այսպէս ահա կատարուեցաւ նորա առաջին ցանկութիւնը։ Բայց հարուստը այնքան աչքածակ էր, որ չէր ուզում ձիի թամբը թողնէ ու գնայ. նա յետ արաւ, շալակեց ու գնաց։

8. Նորա ճանապարհը այնքան աւազուտ էր որ ոտները խրւում էին մէջը. արեգակն էլ միւս կողմից էր այրում նորան։ Շատ դժուարութեամբ էր փոխում իւր քայլերը։ Այդպէս գնալով նա մտածում էր. «Ինձ մնում է դեռ երկու ցանկութիւն. ես էլ այնպիսի բան կը ցանկանամ, որ աշխարհիս երեսին էլ ինձ համար ցանկա-

ՀՈՒՇ ԱՌՍԵՌԿՈՍ
ԵՐԵՎԱՆԻ
ԱՍՏԾԱԾԱՇՆՉԱՆ

նալու բան չմնայ»։ Երբեմն երբեմն նա կարծում էր որ ահա գտաւ, բայց յետոյ նրան թւում էր թէ չէ, այդ քիչ է, մի առաւել լաւ բան ցանկանամ։ Այդպէս մտածելով դնալիս յանկարծ միտն ընկաւ, իւր կինը։ Դա նորան շատ վշտացրաւ և առանց իմանալու ասաց. «Այս ի՞նչ է. ես պիտի այս խոր աւազի միջով, այս տաք արևի տակ թամբը շալակած տնքտնքալով գնամ, իսկ իմ կինս մի հով սենեակի մէջ քէֆ է անում. ա՜յ քո տեղդ նստած մնաս, հա՜»։ Նա այս ասաց թէ չէ, յանկարծ թամբը մէջքից թռաւ և նա տեսաւ, որ երկրորդ ցանկութիւնն էլ կատարուեցաւ։

9. Դա նորա աչքը շատ վախեցրաւ. նորա սիրտը սարսափ ձգեց և նա սկսեց վազել։ Նա ուզում էր որչափ կարելի է շուտով տուն հասնէ, իւր սենեակում նստէ և իւր վերջին ցանկութեան վերայ մտածէ։ Բայց երբ տուն հասաւ և սենեակի դուռը բացաւ, տեսաւ որ իւր կինը նստած այն թամբի վերայ և չէր կարողանում տեղից շարժուիլ. աղաղակում էր ու լաց լինում։ Մարդը ասաց. «Հանգիստ կացիր, ես ուզում եմ ձեռք բերել աշխարհիս բոլոր հարստութիւնները, միայն մնացիր այդտեղ նստած»։ Բայց նա պատասխանեց. «Ի՞նչ օգուտ աշխարհիս բոլոր հարստութիւնից, եթէ ես պիտի մնամ

նստած այս թամբի վերայ. դու ես սորա պատճառը, դու էլ պիտի ինձ սոյանից ազատես»։ Մարդը չէր իմանում ինչ անէ, ցանկանայ այդ թէ ոչ. բայց տեսնելով կնոջ լաց ու կոծը, ստիպուած էր ցանկանալ, որ և իսկոյն կատարուեցաւ։

10. Երբ կինը կրկին ոտի կանգնեցաւ, ձեռները կողքին դրաւ և ասաց. «Դու շատ յիմարն ես եղել. ես քեզնից լաւ արած կը լինէի»։ Այսպէս ահա հարուստը իբրև վարձ ստացաւ չարչարանք, կոիւ, նախատինք և կորցրաւ իւր ձին, իսկ աղքատները ապրում էին սիրով, խաղաղ և սրբութեամբ մինչև իւրեանց կեանքի վերջը։

ՎՐԻՊԱԿՆԵՐ.

Տող	Երես	Սխալ	Ուղիղ
14	3	ուսուցիչի	ուսուցչի
13	4	Դալ	Գալ
10	9	քեղ	քեզ
6	12	յիրկինս	յերկինս
5	14	պաճկոն	բաճկոն
13	45	ան	ՉՆՉԼ
22	45	սկսկեց	սկսեց
1	47	կարչ՝ կար	կար՝ չը կար
17	48	աստեղերը	աստղերը
21	57	ձեղ	ձեզ
3	60	շնորակալութեան	շնորհակալութեան
14	60	վսղելով	վաղելով

ՊԵՏ ՄԱՐԵՄԱՐԱՆ

ԳԻՆՆ է 20 ԿՈՊԷԿ.

Վաճառվում է Զ. Գրիգորեանի Գրաւաճառանոցում։

ՀՄ Հայագիտական գրադարան
MAL005624